ՀՏԴ : 929:947.925 Տեր-Դանիելյան + 32(479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-245

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ «ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՀՈԴՎԱԾԸ*

Հայագետ, հասարակական-քաղաքական գործիչ Դ. Անանունը (1880–1943) XX դարի առաջին երեսնամյակի հայ իրականության կարկառուն դեմքերից է: Գրական-մշակութային, հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ նա մեծապես նպաստել է ինչպես Հայաստանի առաջին Հանրապետության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի առաջին տարիների կայացմանը: Իր բազմաթիվ ուսումնասիրությունների և հրապարակային ելույթների հենքը Հայաստանում «Հայության հավաքման», համախմբման գաղափարի պրոպագանդումն էր: Դ. Անանունի քաղաքական ու գաղափարական հայացքները կատաղի քննադատության էին ենթարկվում, որը և խորհրդային իշխանության առաջին տարիներին հանգեցրեց նրա մեկուսացմանը, այնուհետև՝ մահվանը[1]:

Դ. Անանունը հասարակական-քաղաքական այն գործիչներից, մտավորականներից է, ով, սթափ գնահատելով մեր ժողովրդի ճակատագրում Ռուսաստանի դերը, ընդհանուր առմամբ, համարել է, որ հայ ժողովուրդը պետք է ունենա ռուսական կողմնորոշում: Ու պատահական չէ, որ նա մասնակցել է ռուս-հայ գրական կապերի պատմության մեջ նշանակալի իրադարձություն համարվող Մ. Գորկու նախաձեռնությամբ և խմբագրությամբ 1916 թ. ապրիլի վերջին Պետրոգրադում լույս տեսած «Հայ գրականության ժողովածու»-ի հրատարակությանը[2]: Ժողովածուն նվիրված էր ռուսահայերի ստեղծագործությանը և կազմված էր Վ. Տերյանի ծրագրով՝ Պ. Մակինցյանի ու Լ. Քալանթարի աշխատակ-

---

** Ներկայացվել է 26. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] Դ. Անանունի մասին մանրամասն տե՛ս Դ. Ա ն ա ն ո ւ ն. Ղարաբաղ, հրապարակող՝ Ա. Զաքարյան.– «Գրական թերթ» (Երևան), 22. XII. 1989, Ա. Վ ի ր ա բ յ ա ն. Կյանք և ողբերգություն.– «Հայաստան» (Երևան), 20. VI. 1991, Հ. Բ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, № 1, էջ 19–30, ն ո ւ յ ն ի՝ Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 198–213, Ա. Մ ա ն ո ւ կ յ ա ն. Գրականագետ Դավիթ Անանունը Դաշնակցության համախոհ (1927 թ.).– «Հայոց Աշխարհ» (Երևան), 09. IV. 1999, Ա. Զ ա ք ա ր յ ա ն. Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2010, № 1, էջ 245–252, ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան 140-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2020, № 1, էջ 90–127, ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանունը Հովհաննես Թումանյանի մասին (Դ. Անանունի ծննդյան 140-ամյակի առթիվ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, № 1, էջ 430–436, ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանուն. Ղարաբաղ.– «Գիտություն» (Երևան), փետրվար, № 2, 2020, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանունի հուշերը Ստեփան Շահումյանի մասին.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Երևան), Գ, 2012, էջ 123–135, Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուրվագծեր Դավիթ Անանունի կյանքի և գործունեության.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, № 2, էջ 108–128, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանուն, Երևան, 2020 և այլն:

[2] Сборник армянской литературы. Под редакцией М. Горького. Петроград, 1916.

ցությամբ, այն յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ: Ժողովածուն բացվում է Դ. Անանունի «Армянский вопрос в России» *վերնագրով՝ XI գլխից բաղկացած ծավալուն հոդվածով*[3]*: Նկատենք, որ դա հայերեն՝ «Հայերը Ռուսաստանում» վերնագրով 1917 թ. տպագրվել է Բաքվում լույս տեսնող «Գործ» ամսագրում*[4] *հետևյալ պարզաբանմամբ. «Այս հոդվածի թարգմանությունը լույս է տեսել Մաքսիմ Գորկիի խմբագրությամբ հրատարակված* «Сборник Армянской Литературы» *ժողովածուի մեջ* (Петроград 1916 г.)*: «Գործ»-ի խմբագրությունը ավելորդ չի համարում տպագրել հոդվածի բնագիրը, ի նկատի առնելով նրա շահեկանությունը նաև հայ ընթերցողի համար»*[5]*:*

Նպատակ չունենալով բովանդակային առումով ծավալվել սույն արժեքավոր աշխատության մասին (քանի որ դրա մասին տեղեկանալու լավագույն միջոցը հենց այն կարդալն է, բացի այդ՝ դա հստակ երևում է նաև ստորև բերվող նամակից)՝ ասենք, որ նախքան Մ. Գորկու ժողովածուում հոդվածի տպագրվելը Պ. Մակինցյանն այս գործի մասին հետաքրքիր դիտարկումներով ու առաջարկներով նամակ է գրել հեղինակին: Անթվակիր այդ նամակում Պ. Մակինցյանը գրում է. «Պայծառ Դավիթ, // Ստացա հոդվածդ այսօր: Իսկույն գնացի Աշոտի[6] *մոտ և միասին կարդացինք: Մեր երկսի կարծիքն էլ այս է. առաջին 9 գլուխը – շա՛տ և շա՛տ լավ ես գրել,* առանց տատանվելու կարելի է ասել, որ այդպես և ոչ ոք չէր կարող գրել մեզանում *(ընդգծումը մերն է*– Ա. Զ.): *Իսկ վերջը, շտապելուց է, թե ընչից է, խարաբ ես արել: Որովհետև մեր երկսի համար էլ շատ թանկ է քո մասնակցությունը մեր ժողովածվի («Գարուն»-ի* – Ա. Զ.*) մեջ, ուստի խնդրում ենք, որ նորից գրես վերջը: Թե թույլ տաս, կանենք այս նկատողությունը՝ նախ դուրս գրիր 10 գլխից մինչև վերջ և տեղը գրիր միայն մի կամ երկու գլուխ հետևյալ բովանդակությամբ. ինչպես հոդվածիցդ բխում է՝ ռուսահայերս պոլիտիկական պահանջներ չունենք, այլ ունենք քաղաքացիական պահանջներ (պետիցիան օրինակ) և ահա առանց հասարակության շերտավորման պատմությունն անելու ամփոփիր մեր հասարակության ընդհանուր պահանջները ամենաաջակողմյանից սկսած մինչև ամենաձախակողմյանները: ... Ապա՝ լիբերալական վերաբերմունքդ դեպի Վորոնցով Դաշկովը թող: Այդ ինչ մանիլովշչինա է: Դու ինքդ և դպրոցական հարցի առիթով և մանավանդ հողային կոլոնիզացիայի պոլիտիկայի առիթով բողոքական հոդվածներ ես գրել և նույն իմաստով քննադատաբար վերաբերվել դեպի այդ բյուրոկրատը:*

---

[3] *Նույն տեղում, էջ V–XLVI: Ստեփան Զորյանը «21 օգոստոսի 1916» թվակիր նամակով Դ. Անանունին հայտնում է. «Սիրելի Դավիթ //* “Арм. Сборник”*-ում տպագրված Ձեր հոդվածը մեծ աղմուկ է հանել վրացիների մեջ մի քանի ֆրազների առթիվ: Քութայիսում հրապարակվող «Միջօբարի» թերթի 4–5 համարում Կիյա Աբաշիձեն «Իմ-ամ» կեղծանունով հայհոյում է Ձեզ: Անպայման «Մշակում» քաղվածքներ կտանք, որից գաղափար կկազմեք ...» (Հ. Բ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, էջ 200): Նույն թվականի հոկտեմբերի 25-ին էլ գրում է. « ... մի բան ես մոռացել եմ ժամանակին գրել քեզ: Աբաշիձեի հոդվածից քաղվածքներ թարգմանվեց, բայց անկարելի եղավ տպագրել: Բանից պարզվում է, որ այն, ինչ կարելի է Քութայիսում, նույնը չի կարելի Թիֆլիսում: // Ողորմելի տրամաբանություն: Իսկական* «смутное время»» *(նույն տեղում, էջ 201):*

[4] *«Գործ» (Բաքու), 1917, № 2, փետրվար, Բ. մաս, էջ 1–42:*

[5] *Նույն տեղում, էջ 1:*

[6] *Նկատի ունի էջմիածնի ճեմարանի քաղաքատնտեսության, լատիներենի, գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների դասախոս, փիլիսոփայության դոկտոր, ՍԴՀԿ-ի բովով անցած, հետագայում խորհրդային պետական գործիչ, ակադեմիկոս, ականավոր պատմաբան, Դ. Անանունի մտերիմ ընկեր Աշոտ Հովհաննիսյանին:*

Տաճկահայերի հարցը բոլորովին թո՛ղ: Վասնզի կլինի մի հատուկ ժողովածու տաճկահայերին նվիրված և այնտեղ կգրես «Հայկական հարց» վերնագրով այդ նյութի մասին: Եթե կարևոր է, կարող ես իհարկե հիշատակել, բայց առանձին գլուխ մի նվիրիր:

Այսքանը: Կարծում եմ, որ ընկերաբար կվերաբերվես մեր այս ընկերական դիմումին և չես մերժի այս ծրագրով ավարտել հոդվածդ, որ ըստ ամենայնի տեղյակ և շնորհալի գրչի արտադրանքն է: Եթե թույլ կտաս, հոդվածդ ետ չեմ ուղարկի և կտպեմ «Գարունի» առաջիկա IV համարում, որ այս տարի ուզում ենք լույս ընծայել: Հարմարացրու մեր ծրագրին – թարգմանեմ՝ ղրկեմ: ...»[7]:

Նամակի բովանդակությունից ելնելով, ըստ էության, կարող ենք արձանագրել, որ Դ. Անանունն այդ հոդվածը նախապես ուղարկել է «Գարուն» ժողովածուի IV գրքում տպագրվելու համար: Ժողովածուն, սակայն, չի տպագրվել[8]: Դ. Անանունն առաջարկված «ծրագիրը» չի ընդունել, որը երևում է և՛ Վորոնցով Դաշկովի վերաբերյալ նկատառումից, և՛ հոդվածի XI գլխի պահպանումից. հոդվածը նախնական տեսքով թարգմանվել է ռուսերեն ու տպագրվել Մ. Գորկու վերը նշված ժողովածուում[9]:

Ստորև հրապարակում ենք «Գործ» ամսագրում տպագրված, հայ ընթերցողների համար այսօր էլ «չահեկան» խնդրո առարկա հոդվածը՝ արդի ուղղագրությամբ, սրբագրական և տեխնիկական մասնակի միջամտությամբ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

---

[7] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Դ. Անանունի ֆ., թիվ 80, թ. 1–2:*

[8] *1916 թ. ապրիլի 23-ին Պետերբուրգից Կ. Միքայելյանին գրած նամակում Վ. Տերյանը մասնավորապես հայտնում է, որ տպագրության է պատրաստվում և աշնանը լույս կտեսնի «Գարուն» գրական-քննադատական ալմանախի IV գիրքը (տե՛ս Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու, հ. չորրորդ, կազմեց և ծանոթագրեց՝ Վ. Զ. Պարտիզունին, Երևան, 1979, էջ 249): Այդ մասին «Հորիզոն»-ում հայտարարություն է տպագրվում (տե՛ս 08. VI. 1916): Սակայն «Գարունի» նոր համարներ չհրատարակվեցին. 1917 թ. հունվարին Տերյանի, Մակինցյանի և Միքայելյանի ստորագրությամբ «Նամակ խմբագրության»-ը ծանուցում էր. «Ի նկատի ունենալով «Գործ» ամսագրի երևան գալը. «Գարուն»-ի խմբագրությունը սրանով հայտնում է, որ դադարեցնում է նոր ալմանախների հրատարակությունը ... » (Վ. Տ ե ր յ ա ն. նշվ. ժող., էջ 430):*

[9] *Վ. Տերյանը Ց. Խանզադյանին (<1916, մարտ, Պետրոգրադ>) գրում է. «Բարև արա Դավթին (Անանունին – Ա. Զ.): Շատ ուրախ եմ, որ նրա վրա կանգ առանք հոդվածի համար (մեր ժողովածուի համար) – հոդվածը ինձ դուր է գալիս, թեև, իհարկե, կան թերի տեղեր – դա անխուսափելի է, մանավանդ որ շտապ եղավ գործը» (Վ. Տ ե ր յ ա ն. նշվ. ժող., էջ 247): Ց. Խանզադյանին գրած <1916, հուլիսի II կես–օգոստոս, Պետրոգրադ> նամակում էլ Վ. Տերյանն այս նյութի մասին գրում է. «... Ահա այստեղ էլ Դավթին են հայհոյում տեղիս «պատրիոտները»: Բայց ասա, դարձյալ, ո՞ւմ, ո՞ւմ պիտի դիմեի ես – Ջիվիլեգովի՞ն, թե՞ Վարանդյանին: Ո՞վ է ավելի կարող: Սուբյեկտի՞վ եմ ես, արդյոք, կրկին» (նույն տեղում, էջ 273): Ի դեպ, 1917 թ. հունիսի 9-ին Բաքվից Դ. Անանունը Հայոց Կ. Ազգային բյուրոյի հրատարակչական մասնախմբին հայտնում է. «Մեծ. պ. պ. // Ստացել եմ Ձեր հրավերը «Հայոց հասարակական կյանքը Ռուսաստանում» վերտառությամբ հոդված գրելու Բյուրոյի հրատարակելիք «Կարմիր Գրքի» համար: Իբրև ազգի անդամ և որոշ քաղաքական-հասարակական աշխարհայացքի տեր մի մարդ՝ ես միշտ բողոքել և դեմ եմ եղել Ազգային Բյուրոյի վարած քաղաքականության: Այս պատճառով էլ չեմ կարող աջակցել բյուրոյի այդ նախաձեռնած աշխատանքին» (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1455, ց. 1, գ. 105, թ. 1):*

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ*)

Այս հոդվածում մենք պիտի ջանանք պարզաբանել, թե քաղաքական որպիսի իդեալ ունի հայ ազգը, այսինքն՝ ինչ քաղաքական ձևի մեջ է նա կամենում պարփակված տեսնել հայության հավաքական գոյությունը: Եվ ահա հարցի այս ձևակերպմանը կարող ենք պատասխանել, որ հայ ազգը, իբրև քաղաքական մարմին, Ռուսաստանում քաղաքական իդեալ չունի: Նրա և ոչ մի խավը չի առաջադրում կամ գուրգուրում քաղաքական անջատում: Նրա մեջ չկա և տերիտորիալ ավտոնոմ աշխարհամասի կողմնակցության ազդեցիկ հոսանք, ինչպես թույլ են նաև այն ձայները, որոնք արծարծում են էքստերիտորյալ ազգային-կուլտուրական ավտոնոմիայի անհրաժեշտությունը հայ ազգի անարգել զարգացման համար: Օտար ընթերցողին կարող է անհավանական թվալ այս դրությունը, քանի որ նա անշուշտ լսած կլինի ռուս աջակողմյանների մեղադրանքը, թե Ռուսաստանին ինչ-որ հայկական վտանգ է սպառնում, սակայն իրողությունն այն է, որ «վտանգավոր» հայ ազգը ոչ միայն զուրկ է իր քաղաքական իդեալից, այլև ազգովին մի ապոլիտիկ ժողովուրդ է: Այս երևույթի պատճառը թաքնված է այն աննորմալ պատմության մեջ, որ դայակ է եղել հայերին: Նրան էլ մենք պիտի դիմենք, եթե կամենում ենք խելամուտ լինել, թե ինչ են ներկայացնում հայերը Ռուսաստանում:

I.

Հայ ազգը շատ վաղուց է կորցրել իր քաղաքական անկախությունը: Այս մասին գաղափար ունի համարյա ամեն մի կրթված անձնավորություն: Բայց հավանորեն այդ կրթված անձնավորություններից շատ քչերին է ծանոթ այն պարագան, որ հայ հայրենիքը նվաճող արաբը, սելջուկն ու թաթարը իրանց ռազմական գործողություններով ոչ միայն կոտրեցին հայերի դիմադրական ուժը, այլև այնպիսի վարչական միջոցներ ձեռք առան, որ մշտապես իրանց ապահովեն հայերի վտանգից: Այդ միջոցներից գլխավորը հայերի տնտեսական անխնա շահագործումն էր, համատարած կողոպուտը, որ նրանց հասցրեց գրաստական վիճակի: Ֆրանսիական ճանապարհորդ Տուռնեֆորը, որ 1701 թ. այցելել է Հայաստան, վկայում է. «Պարսիկները արհամարհում են հայերին և, նրանց նկատում են իբրև ստրուկների մի հոտ, որը չի կարող ընտելացնել իրան պատերազմի, ոչ էլ ապստամբել»: Հայ ժողովուրդը իրոք իրան գերության մեջ էր համարում, դիմազուրկ էր դարձել և ազատության կարոտը նրան այցելում էր, իբրև կրոնական մխիթարություն հանդերձյալ կյանքի համար: Հայ երկրի նվաճողները ոչ միայն ժողովրդին տապակում էին շահագործման կաթսայում, այլև ջանում էին նրան զրկել հարազատ առաջնորդներից ու

---

*) *Այս հոդվածի թարգմանությունը լույս է տեսել Մաքսիմ Գորկիի խմբագրությամբ հրատարակված* «Сборник Армянской Литературы» *ժողովածուի մեջ* (Петроград 1916 г.)*: «Գործ»-ի խմբագրությունը ավելորդ չի համարում տպագրել հոդվածի բնագիրը, ի նկատի առնելով նրա շահեկանությունը նաև հայ ընթերցողի համար:*

հովանավորողներից: Եվ նրանք սիստեմատիկ կերպով արմատախիլ էին անում հայ ազնվական դասը, որ միջին դարերում ռազմիկ տարրն էր և ժողովրդի գլուխը: Հայ ազնվականության առջև բացված էր երկու ասպարեզ՝ ազգուրացություն և հավատուրացություն, որ նյութական բարիք ու պատիվ էր բերում տիրողներից, կամ մահ և գաղթ օտար երկրներ: Հիշենք իբրև պատկերացում, որ 706 թ. արաբական կուսակալը խաբեությամբ Նախիջևան հրավիրեց 800 հայ նախարար և նրանց փակելով եկեղեցում՝ այրեց:

Այո՛, դժնդակ, խիստ դժնդակ նվաճողներ եղան Հայաստանի համար արաբները և Միջին Ասիայից դուրս եկած նոմադները: Հայ պատմաբան Լեոն մի վկայություն է բերում արաբ աշխարհագիր Իբն-ալ-Ֆակիհից, թե որն էր Հայաստանին սպասող վիճակը: Ահա այդ պատկերավոր վկայությունը. «Սիրիացի Մեքհուլն ասաց. «Այն երկիրը, որ ամենից առաջ կավերվի, Հայաստանն է»: Հարցրին նրանից. «Իսկ ի՞նչը կավերե նրան»: Պատասխանեց. «Ձիաների սմբակները»): Եվ հենց այս ասացվածքի համեմատ միջնադարյան հայ պատմաբան Մատթեոս Ուռհայեցին բացականչում է. «Նրանց (այսինքն սելջուկների) ձիերի սմբակները մաշեցին լեռներն ու բլուրները»: Իսկ եթե սելջուկների արշավանքներից մաշվում էին լեռներն ու բլուրները, ապա չէ՞ր մաշվիլ հայ ժողովուրդը:*

Եվ նա մաշվեց: Միանգամայն փոխվեց նրա նկարագիրը: Փոխվեց և նրա հասարակական կազմը: Կորցնելով քաղաքական կազմակերպությունը որպես ազգության զորեղ կապ, նա ամուր փարեց թույլ և ոտնահարված միակ ազգային հաստատությանը՝ եկեղեցուն: Հոգևոր դասը դարձավ նրա մխիթարիչն ու առաջնորդը, որ բոլոր պատուհասները վերագրելով ժողովրդի ծովացյալ մեղքերին, սկսեց հնչեցնել համբերության ու խոնարհության քարոզը: Եկեղեցական դասը, իբրև հայության ներկայացուցչություն, պաշտոնապես ճանաչվեց նաև նվաճողների կողմից: Չէ՞ որ հենց իրանք, նվաճողները, ավտոկրատական կազմակերպություն ունեին, մի սիստեմ, երբ հոգևոր ու աշխարհական իշխանությունները ամփոփված են միևնույն ձեռքում: Այս հանգամանքը մեծ չափով զորություն ներշնչեց հայ եկեղեցու կազմակերպությանը: Ճիշտ է, նա կողոպտվում էր անխնա, անարգվում իբրև քրիստոնեություն, բայց այնուամենայնիվ հանդուրժվում էր և աջակցություն գտնում:

Ժամանակի ընթացքում, երբ հայ ազնվականությունը վերացավ երկրի շատ վայրերում կամ մնաց նոսրացած նրա մի քանի անկյուններում, և առհասարակ հայության առաջ խափանվեցին ռազմական և վարչական ասպարեզները, ազգի ծոցում ծնունդ առավ մի ուրիշ հասարակական խավ՝ վաճառականների դասը:

Հայտնի է, որ ավատականությունը հարգանք չունի դեպի առևտուրը և ստոր զբաղմունք է համարում այն, թեև աչքը միշտ տնկած է պահում վաճառականի գրպանին: Հարկավ, Հայաստանում բազմած օտարազգի ավատականությունը խիստ արգելքներ չպիտի հարուցաներ, եթե հայության միջից մարդիկ ելնեին և առևտրով զբաղվեին: Այդ պարապմունքն արդեն չէր արգելված հայերին: Եվ նրանք դարձան ճարպիկ վաճառականներ: Նրանց վաստակի խոշորագույն մասը մտնում էր տիրողների գրպանը, բայց մի բան էլ

*) Լէօ, «Հայ հայրենիքը», Թիֆլիս, 1915, էջ 124:

մնում էր իրանց: Նյութական բարիքների տեր դառնալով, հայ վաճառական դասը սկսեց որոշ դեր խաղալ ազգի կյանքի մեջ: Եթե ազգի ներկայացուցչությունը պաշտոնապես ամփոփված էր հայ հոգևորականության ձեռքին, ապա հայ վաճառականությունը դարձավ նրա նյութական թիկունքը և սկսեց նրա հետ կիսել այդ ներկայացուցչության աղոտ կշիռն ու պատիվը:

*Հայ ազնվականության կրած հարվածը սարսափելի էր, բայց նա միանգամայն չվերացավ: Հայոց անմատչելի լեռներում շարունակեցին մնալ որոշ տոհմեր, որոնք խոնարհվեցին տիրողների առջև, բայց ձեռքից բաց չթողին իրանց արտոնությունները**): *Այդ հայ տոհմերում իշխանությունը ժառանգական բնույթ ուներ և իր բովանդակությամբ նահապետական էր: Նման հայ իշխողները ավելի շուտ ցեղապետներ էին: Նրանց հարգն ու վարկը մեծ էր հասարակ ժողովրդի աչքում: Եվ քանի որ հայ իշխողների թիվը խիստ պակաս էր, ապա նրանք առանձնապես չէին կարող ազգ ներկայացնելու հավակնություններ փայփայել իրանց մեջ: Նրանք ուժ էին, երբ համերաշխություն էին պահպանում ազգային խոշոր ուժի՝ եկեղեցական դասի հետ: Հայության վրա ծանրանում էր օտարի բռնակալությունը և այս հանգամանքը դալիս էր վերացնելու ներքին դասային հակամարտությունը: Հայ հոգևորականը, հայ ցեղապետ-ազնվականը, որ մելիք էր կոչվում, և հայ վաճառականը բռնավոր օտարի դիմաց ստիպված էին համերաշխ ընթանալ և միասին պաշտպանել ազգային իրավունքները, որոնք ընդհանրապես կապված էին կրոնի ազատ դավանության հետ: Ժողովուրդը շատ քիչ բան էր վայելում այդ միությունից: Նա տանելի կյանք էր վարում նույն անմատչելի լեռներում, ուր պահպանվել էին հայ ազնվական տոհմերը: Մնացած վայրերում հայ ժողովուրդը բռնության և շահագործման անմռունչ զոհ էր:*

Ահա այս դրությունն էր ապրում հայությունը, երբ սկսեցին քաղաքականություններ մշակվել Ռուսաստանի և հայ ազգի ներկայացուցիչների մեջ: Դա Պետրոս Մեծի օրով էր:

II.

*Նշանակալից է, որ Պետրոս Մեծի հետ քաղաքական բանակցությունների մեջ է մտնում լեռնային Հայաստանի (Ղարաբաղի) հայ ազնվական-մելիքների ներկայացուցիչը: Այդ հայրենասերի անունը Իսրայել Օրի էր***) *(վախճանվել է Աստրախանում 1711 թ.):*

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ քաղաքական ազատության հարգը այդ ժամանակ ավելի շատ ազնվականությունը կարող էր ճանաչել: Սակայն պետք է ասել, որ Ղարաբաղի մելիքների հետ համերաշխ էր և տեղի հոգևորականությունը, որը բանակցությունների համար հետագայում տվեց իր ներկայացուցիչը (Մինաս վարդապետ): Համերաշխ չէր Ղարաբաղի ազնվա-

---

*) *Այդ ազնվականությունը գլխավորապես կենտրոնացած էր Ղարաբաղում, այժմյան Գանձակի նահանգի Շուշու, Կարյագինի, Ջիվանշիրի, Զանգեզուրի և Գանձակի գավառներում:*

**) *Պետրոս Մեծի վերաբերմունքի մասին դեպի հայերը տե՛ս* Г. А. Эзов, «Сношение Петра В. с армянским народом» *մեծ մենագրությունը.* С. П. Б., 1898.

կան և հոգևոր դասերի հետ հայոց ընդհանրական կաթողիկոսը, որը նստած լինելով պարսկական բռնության կենտրոնում (Էջմիածին), վտանգավոր քայլ էր համարում հայերի բանակցությունը օտար պետությունների հետ:

Ի՞նչ էին խնդրում Պետրոս Մեծից հայերը: Օգնել իրենց զինվորական ուժով՝ թոթափելու պարսից լուծը: Նրանք Պետրոսին բացատրում էին, որ Պարսկաստանը ճարճատում է ներսից, որ նա չի կարող դիմանալ ռուսական գրոհին: Որ անհրաժեշտ է վերականգնել հայոց անկախությունը և զորացնել Վրաստանը և այս քրիստոնյա պետությունների միջոցով առևտրի լայն դուռ բանալ Արևելքի հետ: Պետրոսը համամիտ էր հայերին: Այս առիթով ակադեմիկ Պ. Բ. Բուտկովը գրում է. «Պարսկաստանի հարուստ գավառների միացումը Ռուսաստանին մի նպատակ ուներ՝ հարստացում և ռուսական առևտրի ծավալում մինչև Հնդկաստանի և Ասիայի այդ ընդարձակ մասի սահմանները: Թագավորը ցանկանում էր, որ Պարսկաստանում տիրապետությունն անցնի քրիստոնյաներին՝ վրացիներին, հայերին և ռուսներին»):*

Պետրոսը այս ծրագրի իրագործման համար սկսեց հուսադրել հայերին ու վրացիներին, դրդեց նրանց՝ ակնհայտնի կերպով դուրս գալ պարսկական հպատակությունից և զորք կազմելով, սպասել իր արշավանքին դեպի Անդրկովկաս: Ռուսական զորքերը իրոք 1722 թ. շարժվեցին Աստրախանից և գրավեցին Կասպից ծովափնյա գավառները՝ Դերբենդ, Բաքու, Գիլան և Մազանդարան: Հայերը և վրացիները վրաց Վախթանգ թագավորի առաջնորդությամբ սպասում էին Պետրոսին Գանձակի մոտ, բայց ռուսական շարժումը իր վրա գրավեց Թուրքիայի ուշադրությունը (Պարսկաստանը ներքին խռովությունների շնորհիվ անկարող էր դիմադրություն ցույց տալ ռուսներին) և Պետրոսը, անցանկալի համարելով ընդհարումը այդ զորեղ պետության հետ, հատուկ դաշնադրությամբ պարտավորվեց առաջ չխաղալ դեպի Անդրկովկասի խորքերը և բավականանալ միմիայն մերձկասպիական գավառների գրավումով: Հայաստանն ու Վրաստանը թողնվեցին իրանց ճակատագրին: Թուրքիան էլ կամեցավ օգտվել Պարսկաստանի խառնակ վիճակից և իր զորքերով գրավեց պարսկական Հայաստանն ու Վրաստանը, սոսկալի ջարդեր տեղալով ապստամբված քրիստոնյա բնակչության գլխին: Վախթանգ թագավորը ապավինեց Ռուսաստանին: Հայ ժողովուրդը խոնարհվեց Թուրք պետության լծին, թեև դիմադրության առանձին հաջող փորձեր արավ:

Պետրոս Մեծը, որ հուսադրել էր հայերին, իր հրովարտակներով նրանց ոտքի կանգնեցրել և ապա իրանց ճակատագրին թողել, 1724 թ. նոյեմբերի 10-ին ուկազներ ստորագրեց, որոնցով հայերին հրավիրում էր գնալ բնակվելու մերձկասպյան նորանվաճ գավառներում, Թերեք և Սուլակ գետերի ափին և այլն: Գեներալ-մայոր Կրոպոտովի անունով տրված ուկազի մեջ կայսրը պատվիրում էր. «Ցույց տուր նրանց ամեն օգնություն և պահպանիր նրանց ամուր հովանավորությամբ. վարվի նրանց հետ այնպիսի եղանակով, որ նրանցից

*) П. Б. Бутков, «Материалы для новой истории Кавказа с 1722 г. по 1803 г.», т. I, С. П. Б., 1869, стр. 146.

չլսվի և ոչ մի գանգատ, որովհետև մենք այդ հայ ժողովրդի վրա սփռել ենք մեր կայսերական առանձին ողորմությունն ու հովանավորությունը»):*

Հարկավ Պետրոս Մեծի այս առաջարկից օգտվողներ եղան, բայց հայերի ցանկությունն էր մնալ իրանց հողի վրա և ազատագրվել իբրև հայրենիքի տեր ժողովուրդ:

Մերձկասպիական գավառները (провинции) *երկար չմնացին Ռուսաստանի ձեռքում: Պետրոսի ապիկար հաջորդները 1735 թ. մարտի 10-ին Պարսկաստանի հետ կապած պայմանագրով այդ գավառները վերադարձրին իրանց նախկին տերը: Այդ ժամանակ Պարսկաստանում թագավորում էր Նադիր շահը, որ իր պատերազմական գործողություններով ընդդեմ աղվանների և Թուրքիայի ահագին հռչակ էր ստացել Արևելքում և Արևմուտքում: Նադիրը լավ վերաբերմունք ցույց տվեց դեպի հայերը, որպեսզի նրանց հեռու պահե Ռուսաստանից: Նա մելիքներին հաստատեց իրանց ժառանգական իշխանության մեջ և անմիջական ստորադասության մեջ դրեց պարսկական արքունիքից, որով սանձ դրեց տեղական թուրք իշխողների պրետենզիաներին**):*

Իսկ Պետրոս Մեծի ձեռնարկից այն ժառանգությունը մնաց, որ հայերի քանակը շատացավ Աստրախանում և Թերեք գետի վրա: Այդ հայերը զարկ տվին ռուս-պարսկական առևտրին և մետաքսի գործարաններ հիմնեցին հարավային Ռուսաստանում: Հետևյալ թվերը ցույց են տալիս, թե հայերը ինչ դեր էին խաղում ռուս-պարսկական առևտրի մեջ: 1737 թ. մինչև 1745 թ. Ռուսաստանից ներմուծվել է Պարսկաստան.

Ռուսների ձեռքով	*416, 005 ռ. 44 կ.*	*ապրանք*
Հայերի »	*2, 484, 024 » 51 1/2*	*»*
Անգլիացիների »	*698, 133 » 92 1/2*	*»*
	Ընդամենը՝ 3, 598, 163 ռ. 88 կ.	*»*

Պարսկաստանից արտահանվել է Ռուսաստան.

Ռուսների ձեռքով	*631, 510 ռ. 31 3/4 կ.*	*ապրանք*
Հայերի »	*1, 597, 953 » 5/8 »*	*»*
Անգլիացիների »	*200, 460 » 2 3/4 »*	*»*
	*Ընդամենը՝ 2, 429, 913 ռ. 35 1/8 կ. ***)*	*»*

Պարզ է, որ հայերի դերը ռուս-պարսկական առևտրի մեջ միանգամայն գերիշխող էր:

Հայ-ռուսական քաղաքական բանակցությունները նորից կյանք առան Եկատերինա Մեծի օրով: Նորից հրապարակի վրա երևաց հայկական անկախ պետության ստեղծման և Վրաստանի հզորացման գաղափարը: Եկատերինան

---

*) Бутков, стр. 68.

**) *Անդ, հ. II, էջ 385:*

***) Бутков, т. I, стр. 222 *(ծանոթություն): Անդ, էջ 417–419:*

էլ էր ցանկանում Անդրկովկասի վրայով առևտրական կապ հաստատել Հնդկաստանի հետ: Նրա ծրագիրն էր Քուռ գետի վրա Եկատերինասերդ անունով մի քաղաք հիմնել, որը պիտի դառնար խոշոր առևտրական կենտրոն: Ապա նա ծրագրում էր Բաքուն իր ըցավառվող նավթային գազերով դարձնել մի տեսակ Մեքքա Հնդկաստանի կրակապաշտների համար և դրանով սերտ կապեր հաստատել այդ երկրի հետ: Մյուս կողմից նրա սիրելի իշխան Պոտյոմկինը Արևելքում թագ ստանալու տենչն էր գուրգուրում իր սրտում: Հայերի կողմից այս շրջանում բանակցություններ էր վարում արքեպիսկոպոս իշխ. Հովսեփ Արղության-Երկայնաբազուկը, որը իր նամակներով հուսադրում էր մելիքներին և ազգի մյուս գլխավորներին, թե մոտ է հայերի փրկության և ազատ կյանքի ժամը: Ռուսաստանի ծրագիրները և հայերի ու վրացիների համակրությունը այդ ծրագրերին չափազանց թանկ նստեցին նրանց: Սկսվեց քրիստոնյաների մի չտեսնված հալածանք Անդրկովկասի թուրք խաների կողմից, որոնք տեղական իշխողներ լինելով, ճանաչում էին Պարսկաստանի գերիշխանությունը:

Վերջապես դեպի Անդրկովկաս արշավեց ինքը՝ Պարսկաստանի շահ Աղա-Մահոմեդ-խանը, որը 1795 թ. գրավեց Թիֆլիսը, կործանեց քաղաքը, իսկ ժողովրդին կամ կոտորեց, կամ գերի տարավ: Դա մահացու հարված էր Վրաստանի համար: Շահի արշավանքը ավերիչ հարված էր նաև հայաբնակ գավառների համար. սովը և ժանտախտը հետևանք եղան այդ արշավանքի և երկրի բնակչությունը խիստ նվազեց:

Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը 100 հազար ռուբլի տվեց բռնավորին, որով և փրկեց ազգի սրբավայրը կործանումից:

Հետ դարձավ դեպի Պարսկաստան Աղա-Մահոմեդ-խանը և ռուսական զորքերը 1796 թ. հրաման ստացան մտնել Անդրկովկաս, մի թևը դեպի Վրաստան, մյուսը դեպի Մերձկասպիական գավառները: Ռուսական Կասպիական կորպուսի հետ արշավանքին մասնակցում էր և Հովսեփ արքեպիսկոպոսը, որը բանակցություններ էր վարում թուրք իշխողների հետ, հոժարեցնելով նրանց ընդունել ռուսական հպատակություն և դիմադրություն ցույց չտալ զորքերին: Ամեն ինչ հաջող էր գնում և ռուսները թեթև ջանքերով գրավեցին Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Շամախու, Շեքիի (Նուխու), Գանձակի խանությունները: Հպատակության էր պատրաստվել նաև Ղարաբաղի (Շուշու) խանը, որը հայերի ոխերիմ թշնամին էր, բայց վախճանվեց կայսրուհին և նրա որդի Պավելը, որ իր մոր գործերին հակառակ էր, հրաման տվեց զորքերին հետ նահանջել Անդրկովկասից դեպի Ռուսաստան: Մեծ էր հայերի վիշտը այդ կարգադրության պատճառով: Նրանք նորից հանձնվեցին գիշատիչ խաներին, որոնք բազմապատկեցին ավանդական հալածանքը, բռնությունը և կողոպուտը:

Բայց Վրաստանի քաղաքական կացությունը այնպիսի ընթացք ընդունեց, որ Ռուսաստանը այլևս իր զորքը դուրս չհանեց այդ երկրից: Արդեն 1783 թ. դաշնագրով Վրաստանը հանդեպ Ռուսաստանի վասալական վիճակի մեջ էր: 1801 թ. հունվարի 18-ի հրովարտակով նա հռչակվեց միացրած Ռուսաստանին իբրև մի պրովինցիա: Այս թվականից Ռուսաստանը ամուր նստեց Անդրկովկասում և քայլ առ քայլ սկսեց նվաճել և հպատակեցնել իրան հայ-թուրքական գավառները: Հայերի ձգտումները՝ վերացած տեսնել պարսկական

բռնակալությունը, այժմ իրագործվում էին: Բայց չէր իրագործվում նրանց տենչը ինքնուրույն քաղաքական կյանք ունեցող Հայաստանի մասին: Դա այժմ նույնիսկ անիրագործելի էր, որովհետև մի դարի պայքարներն ու հալածանքները խիստ ծանր էին նստել հայ բնակչությանը. նա նվազել էր թվով և մասամբ լքել հայրենիքը, իսկ նրա առաջնորդ մելիքները նվազել էին և նյութականի կողմից: Մի ժամանակ նրանք իրանց էին համարում երկրի բնական տերը, իսկ այժմ խոնարհվել էին խանական իշխանության առջև:

III.

Թե որքան պարսկական բռնությունները քաղաքականապես դիմադրուկ էին դարձրել հայ ժողովուրդը մանավանդ նրա պատմական հայրենիքի սրտում՝ Արարատյան դաշտում, այդ մասին խիստ հետաքրքրական է լսել նոր հայ գրականության երախտավոր հիմնադիրներից մեկի՝ Խաչ. Աբովյանի վկայությունը, որ անձամբ ապրել է պարսկական տիրապետության ներքո, ուրեմն և միանգամայն վստահելի վկա է: Երևանի հայ երևելիները հետևյալն են հարցնում իրենց այցելության եկած Էջմիածնի վարդապետներից. «Ախր որ մեր միան էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կլի: Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա ա բարձրացնում: Զիլում՝ որ մեկ օր գնանք, ջուրը թափվենք պրծնենք: Մնացել ենք եթիմի պես չլինքներս ծռած. սրա վերջն ախր ի՞նչ պետք ա ըլի, գիր չէ՞ք բաց արել, ի՞նչ ա ասում. էս աշխարքս քանի՞ տարի էլ պտի մնա. վախտը հասել չի՞, որ մեկ Գաբրիելյան փողը փչեր, աշխարքս հայլու պես դգվեր ... Էջմիածինը և Երուսաղեմը մնային, մեր ազգը զորանար, էս անհավատ անօրենները մի կորչեին, ջնջվեին և մենք սկսեինք երկնքի և երկրի փառքը վայելել, ինչպես որ հրեշտակը երազումը մեր սուրբ Լուսավորչին պատմել ա»: Աստված Լուսավորչին չարչարելով՝ «մե՛ր խաթեր էնպես արավ, որ մեր ազգն էլ տանջվի, չարչարվի, էլ էս աշխարքին թամահ չանի, որ Աստուծո մոտ պարզերես գտնվի ու երկնային թագավորությունը վայելի: Ախ, ի՞նչ կլեր, որ էս օրը մի շուտ գար, մեր աչքն էլ լիս տեսներ. երկրի թագավորությունը մեր ընչի՞ն ա պետքը, երկնքումը պտի մեր աստղը բանի, որ ամեն ազգ էլ տեսնին ու մեզ էրնակ տան: Մեր գլխին թագ, իրանցը բաց տեսնեն ու ամաչեն, փոշմանեն, որ երկրիս մեծությանը էնքան եսիր էին էլել»):*

Հայ ժողովուրդը այսպիսով իր երկրային տառապանքների շնորհիվ տարվել էր կրոնական միսսիանիզմով և իր փրկությունը սպասում էր հանդերձյալ կյանքի գալստյամբ: Դա մի ժամանակ էր, երբ Ռուսաստանը ոտքը ամուր դրել էր Վրաստանում և առաջ էր մղում իր նվաճողական քաղաքականությունը: 1804 թ. նա նվաճեց Գանձակի խանությունը: 1805 թ. նրան հպատակություն հայտնեցին Շուշու, Շեքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի խանությունները: Այդ նվաճումը վերջնականապես հաստատվեց 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքած ռուս-պարսկական պայմանագրով: 13 տարուց հետո 1826 թ. պատերազմը նորից բորբոքվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Պարսկաստանը հաղթվեց և 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրով զիջեց Ռուսաստանին Երևանի ու Նախիջևանի խանությունները և

---

*) *Խաչատուր Աբովյանի Երկերը, Մոսկուա, 1897, էջ 124:*

Օրդուբադի գավառը: Դարձյալ պատերազմն ստիպեց, այս անգամ Թուրքիային, 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանին զիջել Ախլցխայի փաշալիքը: Այսպիսով նախորդ դարի քսանական թվականների վերջում Ռուսաստանը գրաված ուներ այժմյան Գանձակի, Երևանի և Բաքվի նահանգները: Այս նահանգների բնիկ հայ ժողովրդին միացավ Պարսկաստանից և Թուրքիայից գաղթած հայերի մի հոծ բազմություն (140, 000 հոգի): Եվ հայերի թիվը Անդրկովկասում հասավ 300 հազարի):*

*Կարո՞ղ է այս հայությունը որևէ հայ քաղաքական իդեալ սնուցանել իր մեջ նման այն իդեալներին, որ արծարծվում էին Պետրոս Մեծի և Եկատերինա Մեծի ժամանակ: Ոչ, նա կատարյալ խեղճություն էր ներկայացնում և զուրկ էր ազգը ժողովող զորեղ դասակարգից: Ազնվականությունը քանակով աննշան էր, տգետ և նյութապես թույլ: Վաճառականությունը բուն հայրենիքում խոշոր նյութականի տեր չէր և զորեղ էր գաղութներում (Հնդկաստան, Ռուսաստան և այլն): Նա քաղաքականապես տհաս էր: Մնում էր հոգևորականությունը, որ ազգը ներկայացնող դասն էր, կազմակերպված էր և կշիռ ու պատիվ ուներ: Սակայն այդ դասն էլ ըստ մեծի մասին խարխափում էր տգիտության գրկում և հեռու էր քաղաքական հարցերից: Նրա առանձին ներկայացուցիչները (Հովսեփ արքեպ. Արղությանը և Ներսես Աշտարակեցին) ավելի աչքաբաց էին և որոշ ազգային քաղաքական իդեալներ էին սնուցանում, բայց նրանք էլ անզոր գտնվեցին համատարած խեղճության մթնոլորտում: Նրանց ջանքերը, դիվանագիտական մարգանքները վերջիվերջո գալիս էին հայ ժողովրդին գործիք դարձնելու օտարի ձեռքում և ամրացնելու նրա տիրապետությունը նորանվաճ երկրում: Հայերը խոշոր ծառայություններ մատուցին ռուսական զենքին: Նրանք կամավորներ էին տալիս, պաշար և տեղափոխության միջոցներ էին մատակարարում, ամեն կարգի աջակցությամբ թուլացնում էին թշնամու դիմադրական զորությունը: Կարելի է մի ամբողջ հատոր գրել այդ նյութի մասին: Եվ այդ բոլորին ի վարձատրություն հայերն իրավունք էին ստանում լոկ հասարակ ռուսահպատակ դառնալ: Դա էլ մի խոշոր բարիք էր նահատակ ազգի համար: Դիմենք նորից Խաչ. Աբովյանի վկայության: Տեսնենք ռուսական տիրապետությունը ինչ խոսքեր է կորզում նրա գրչից. «Հայոց արտասվալից աղոթքը, որ գիշեր ցերեկ անում էին, թե երբ կլի մեկ ռուսաց՝ իրանց հավատակցի երեսը տեսնեն, եղո հողը մտնեն, լսեց Աստված և կատարեց»**): ... «Կարելի է՝ աշխարհք աշխարհքով դիպչի, ազգեր գան ու էլ եղ ոչնչանան, բայց քանի որ հայի շունչն ու լեզուն կա, ե՞րբ նրանց մտքից կերթա էն ավետալից սհաթը (Երևանի առումը –Դ. Ա.) ...»***: «Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռքը գցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»****):*

Այո՛, ռուսական տիրապետությունը բացարձակ բարիք էր: Նրա հովանու տակ 300 հազարանոց մի հայկական բազմություն սկսում էր զարգանալ

---

*) «Նոր-Հոսանք», № 5, 1914, էջ 748–749. մեր աշխատությունը՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում»:

**) Խաչ. Աբովյանի Երկերը, էջ 268:

***) Խաչ. Աբովյանի Երկերը, էջ 271:

****) Խաչ. Աբովյանի Երկերը, էջ 272:

միևնույն քաղաքական և հասարակական նորմաների ներքո, մի առավելություն, որ գոյություն չուներ հին՝ իրարից բաժան-բաժան և իրար բզկտող մանր-մունր բռնակալ իշխանությունների մեջ: Այժմ հայերը ապահովված էին ֆիզիկական գոյության կողմից: Նրանց առաջ բացվում էր պետական ծառայության ասպարեզ: Ապահովվում էր երկրի մեջ երթևեկությունը, հռչակվում էր զբաղմունքի և արհեստի ազատություն, որ անգնահատելի բարիքներ էին վաճառական դասի համար: Մի խոսքով՝ պարսկական և թուրքական անհավասարության և անարխիայի փոխարեն հաստատվում է ամուր կարգ ու կանոն:

Ռուսական տիրապետությունը հեղափոխիչ ազդեցություն ունեցավ հայ ազգի սոցիալական կաղապարման գործում: Անցավ երեք տասնյակ տարի և հին ազգության փոխարեն նորն էր շնչում և հավաքական գոյության ձևեր փնտրում: Դրա հետ մենք կծանոթանանք հետևյալ գլխում:

IV.

Հայ ազգության ողնաշարը թե պարսկա-թուրքական տիրապետության շրջանում և թե այժմ կազմում է գյուղացիությունը: Այդ գյուղացիությունը պարսկա-թուրքական տիրապետության տակ կեղեքվում էր անխնայորեն, բայց ճորտական վիճակ չէր ճանաչում, քանի որ ճորտությունը, իբրև ինստիտուտ, գոյություն չուներ հիշյալ պետություններում: Անդրկովկասում ճորտությունը իր սարսափներով գոյություն ուներ միմիայն Վրաստանում և հայ գյուղացիության մի աննշան մասը, որ ապրում էր այդ երկրում, ենթակա էր ճորտական վիճակի: Վրաստանում ճորտեր ուներ նույնիսկ հայ եկեղեցին, մի բան, որ տեսնված չէր պարսկա-թուրքական պետություններում: Այստեղ հայ գյուղացիությունը թպրտում էր կաշառակեր և հարստահարիչ ոստիկանության ցանցերում և միայն այդքանը: Գյուղացիությունը կամ կառավարվում էր հայ մելիքների, կամ թուրք բեկերի ձեռքով, որոնք պետությունից ռոճիկ չէին ստանում և իրանց ոստիկանական-դատաստանական ֆունկցիաների համար վարձատրվում էին ժողովրդից հավաքած հարկերի որոշ մասով կամ բացարձակ կաշառքով:

Այլ դրություն ստեղծվեց հայ գյուղացիության համար, երբ երկիրը անցավ ռուսների ձեռքը: Ռուսները նշանակեցին վարձովի պաշտոնյաներ և սկսեցին ներմուծել ներքին Ռուսաստանի բարդ բյուրոկրատական մեխանիզմը, որ սկզբում մի կատարյալ չարիք դարձավ բնակչության համար: Արևելցին ընտելացել էր իշխանավորի անմիջական դատաստանին, իսկ ռուսական կարգերը իրանց անվերջ գրագրությամբ և խծբծանքներով ծանր էին գալիս ժողովրդին: Այսպես թե այնպես նոր կարգերով և պաշտոնյաներով հրաժարեցվում էին մելիքներն ու բեկերը: Նրանց համար այլևս հասարակական ֆունկցիա չէր մնում և ժողովուրդն էլ ազատվում էր նրանց կերակրելու պարտավորությունից: Բայց դուրս եկավ դրա հակառակը: Անդրկովկասի այդ տիրող դասը արդեն կռահել էր, թե ինչ կարգեր են տիրում ներքին Ռուսաստանում և նա սկսեց աղմկելով ապացուցանել, որ ինքը ռուս կալվածատեր դասի նման մի հասարակական խավ է, որ իր անդամների կառավարչությանը հանձնված շրջանները անշարժ սեփականություն են, իսկ գյուղացիները՝ ճորտեր: Ռուս

իշխանությունը սկզբում չէր կամենում հաշտվել այս պահանջի հետ: Ա. Պ. Երմոլովի կուսակալության շրջանում (1816–1827) շատ էլ ուշադրության չէր առնվում այդ պահանջը, քանի որ նա անհիմն էր: Ինքը Նիկոլայ I իր՝ Կովկասի այցելության ժամանակ (1837 թ.) լսելով Ղազախի գավառի հայ գյուղացիների գանգատը, թե թուրք աղալարները «առաջ կողոպտում էին հայերին, իսկ այժմ կառավարում են նրանց», հրամայեց ազատել հայերին աղալարների կախումից): Կայսեր այդ վերաբերմունքը առիթ դարձավ, որ պետական ընդհանուր տեսակետ մշակվի խանների, աղալարների, մելիքների և բեկերի (այսպես կոչված* высшее мусульманское сословие*) հողային պրետենզիաների նկատմամբ: Այս հարցի պարզաբանումը հանձնվեց սենատոր Գանին, որն այն եզրակացության եկավ, թե վերոհիշյալ տարրերի հողային պահանջները անհիմն են և կառավարությունը 1841 թ. 25 ապրիլի օրենքով հրաժարվեց կալվածատեր ճանաչել աղալարներին: Կառավարության դիտավորությունն էր այդպես վարվել և մուսուլմանական բարձր դասի մնացած խավերի հետ: Այս մտադրությունը ոտքի կանգնեցրեց այդ դասին: Նա պարզ տեսնում էր, որ ինքը զրկված է քաղաքական ազդեցությունից, ուստի չէր կամենում ձեռքից տալ և տնտեսական ուժը, որ հողի և աշխատավոր մարդկանց մեջ էր կայանում: Սկսվեցին խլրտումներ և բարդացավ երկրի կառավարչության գործը: Բանն այնտեղ հասավ, որ Պետրոգրադից Անդրկովկաս եկավ իշխ. Զերնշովը և մի կոչով կայսեր անունից խոստացավ բավարարել բարձր դասի հողային պահանջները: 1844 թ. Կովկասի փոխարքա նշանակվեց իշխ. Մ. Ս. Վորոնցովը: Սրա օրով մուսուլմանական բարձր դասը արժանացավ առանձին բարյացակամ ուշադրության: Նրա հողային իրավունքների մասին իր զեկուցման մեջ Վորոնցովն ասում է. «Ամենուրեք, ուր ժողովուրդը քաղաքացիական ստորին աստիճանի վրա է, կառավարության համար անհամեմատ դժվար է ներգործել ամբողջական մասսայի վրա, այնինչ դա հեշտ էր մի դասի միջոցով, որն ավելի լուսավոր է և հետևաբար ավելի ազդեցիկ: Այստեղ երկրի քաղաքական կացության շնորհիվ դժվարությունն ավելի է շոշափելի, ուստի ոչ միայն պետք է ոտնձգություն անել դեպի բարձր դասի իրավունքները, այլև անհրաժեշտ է բոլոր միջոցներով պաշտպանել և հաստատել, որովհետև միայն ազնվապետական սկզբունքը կարող է հաղթահարել այն ռամկավար ուղղությունը, որ զարգացել է և այնպես խոր արմատներ գցել Դաղստանում և որի դեմ, ցավելով պիտի ասել, մինչև օրս զենքից բացի ուրիշ պատվար չի հակադրվել»: Կայսեր նա գրում էր. «Պետք է վերադարձնել աղալարներին ու բեկերին այն հողերը, որոնք սխալմամբ և մեծ վնասով մեզ համար խլվել են նրանցից»**):*

Այդպիսով ռուսական բյուրոկրատիան ցույց էր տալիս իր ճորտական բնույթը: Ինչ նա տեսել էր ներքին Ռուսաստանում, այն էլ կամենում էր պատվաստել պետության ծայրագավառներում: Եվ իշխ. Վորոնցովի փոխարքայության օրով մի շարք օրենքներ հրատարակվեցին (Հրովարտակ 6 դեկ. 1846 թ., օրենքներ. 20 ապր. 1847 թ., 28 դեկտ. 1847 թ. և 8 դեկտ. 1851 թ.), որոնցով

*) В. Н. Иваненко, «Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до Наместничества В. К. Михаила Николаевича», Тифлис, 1901, стр. 338.

**) Акты, собр. Кавк. Археогр. Комиссией, т. X, № 15.

բարձր դասը հողատեր դարձավ, իսկ հայ և թուրք գյուղացիների խոշորագույն մասը՝ այդ դասի ճորտը: Ճորտական վիճակը տարածվեց հայ գյուղացիության 24 %-ի վրա (1886 թ. մարդահամարի հաշվով): Այդ դրության էական կողմը այն էր, որ գյուղացիությունը իր բերքերից բաժին (1/5, 1/10, 4/30) պիտի հաներ կալվածատեր դարձած բարձր դասի անդամներին, ծառա պիտի տար նրանց, անվարձ պիտի աշխատեր նրա տնտեսության մեջ և պիտի ենթարկվեր նրա վարչական-ոստիկանական կառավարչության ու դատաստանին: Հայ գյուղացիությունը ճորտ տրվեց ոչ միայն հայ մելիքներին, այլև ավելի շատ թուրք խաներին ու բեկերին, իսկ թե ինչպես էին վերաբերվում վերջիններս իրանց կերակրող աշխատավորներին, դրան կարող է պատկերացում ծառայել հետևյալ փաստը. «1842 թ. իրանց կալվածատեր գնդապետ Ջափար -Ղուլի աղայի դեմ ծառանում են Բանագոր գյուղի (այժմյան Կարյագինի գավառում) բնակիչները: Նրանք պահանջում էին թեթևացնել հողատիրության պայմանները: Գյուղի քահանա Մինաս Միրզաբեկյանը, ժողովրդի վճիռը կատարելով, փիլոն ծածկած ներկայանում է Ջափար -Ղուլի աղային, բայց սա կատաղած՝ հրամայում է իր ծառաներին վերցնել փիլոնը և գցել շան վրա, իսկ քահանայի հետ եղած գյուղացիներին հրամայում է երկրպագել փիլոն ծածկած շանը»): Եվ սա Թուրքիայում չէր կատարվում, այլ մի քրիստոնյա պետության մեջ: Եթե թուրք կալվածատերը գիտեր անարգել հայ գյուղացու կրոնը, հայ կալվածատերը գիտեր նրան օտարացնել այդ կրոնից:*

*«Մեր օրերում (1885 թ.), – գրում է Ստ. Զելինսկին, – ուղղափառություն են դավանում Էջմիածնի գավառի Շահրիար գյուղի բնակիչները, թվով 24 ծուխ կամ 196 հոգի երկու սեռի: Այդ գյուղի բնակիչներից ոմանք ուղղափառություն են ընդունել դեռ 1865 թ., իրանց կալվածատիրոջ հետ ունեցած վեճից հետո»**):*

Սա նշանակում է, որ հայ գյուղացին կալվածատիրոջ ճանկերից ազատվելու և հող ստանալու համար կրոնափոխության է դիմել, «ռուս» է դարձել, որ ռուսական իշխանության աչքը քաղցր լինի իր վրա:

Այս երկու օրինակները ցույց են տալիս, թե որպիսի սոցիալական վիճակ ստեղծեց հայ գյուղացիության համար այն պետությունը, որի առաջխաղացումը Արևելքում նա համարում էր «Փրկչի» գալուստ: Եվ այդ գյուղացիությունը այնքան համբերատար գտնվեց, որ անգամ դա համարվեց բարեկեցության և գոհության նշան:

1861 թ. փետրվարի 19-ին ռուս գյուղացիությունը ազատագրված հռչակվեց ճորտությունից: Հայերի և թուրքերի համար համանման օրենք հրատարակվեց 10 տարի հետո՝ 1870 թ. մայիսի 14-ին: Դա իրոք ազատագրող օրենք չէր: Նա գյուղացիներին թողնում էր պարտադիր (обязанный) *վիճակի մեջ դեպի կալվածատերերը, որովհետև միանգամից չէր վերջացնում հողերի փրկագործումը* (выкуп)*: Նոր օրենքը վերացնում էր պարտադիր աշխատանքները կալվածատիրոջ տնտեսության մեջ և ծառա տալու պարտավորությունը, որո-*

---

*) *Լէօ, «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի», Թիֆլիս, 1915, էջ 79:*

**) Свод материалов по изучению эконом. быта госуд. крестьян Закавказского края, т. II. Тифлис, 1887, стр. 36.

չելով դրանց փոխարեն իբրև հատուցում դրամական տուրք: Գյուղացին պիտի անխափան շարունակեր բերքի տուրք տալ կալվածատիրոջը, ինչպես և առաջ: Իսկ կալվածատերերի ոստիկանական-դատաստանական իրավունքները գյուղացիների վերաբերմամբ ոչնչացված էին առաջ, 60-ական թվականների կեսին, քանի որ նրանք վիթխարի չափերով իշարն էին գործադրում այդ իրավունքները: Գյուղացիների իսպառ փրկագործումը 1870 թ. մայիսի 14-ի օրենքը կապում էր նրանց և կալվածատիրոջ փոխադարձ համաձայնության հետ: Նա ստիպողական միջոցներ չէր ձեռնարկում այդ իմաստով և պետական նյութական աջակցություն չէր ցույց տալիս, ինչպես այդ կատարվել էր ներքին նահանգներում: Գալով հողերի բաժանման, որ պիտի տեղի ունենար կալվածատերերի և գյուղացիների միջև, պետք է ասել, որ շնորհիվ կաշառակեր հաշտարար միջնորդների (мировые посредники) *գյուղացիները ըստ մեծի մասին ստացան առապար, ավազոտ և անբերրի տեղեր: Հողերի լավագույն մասը մնաց կալվածատերերին, որոնք օգտվելով օրենքի մի կետից, թե կալվածատերը կարող է իրան վերապահել հողերի 1/3-ը, գյուղացիներին չտվին որոշված շնչաբաժինը* (душевой надел)**):*

1870 թ. մայիսի 14-ի օրենքը իր գոյությունը պահպանեց ուղիղ 42 տարի: Այդ ժամանակամիջոցում գյուղացիները բնական և դրամական տուրքեր տալով կալվածատերերին, կրկնակի հատուցին իրանց բաժին մնացած հողերի արժեքը: Սակայն Գ. Պետական Դուման կամեցավ վերջնականապես ազատագրել միանգամ արդեն «ազատագրված» գյուղացիներին: Նա ընդունեց 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, որով գյուղացիների ազատագրումը կատարվում էր ստիպողաբար (принудительно) *և պետական դրամական օժանդակությամբ: Հայ և թուրք գյուղացիները պարտավորվում էին պետական գանձարանի աջակցությամբ 24 միլիոն ռուբլի վճարել իրանց հողատերերին: (Այդ գումարի մեջ չի մտնում այն տոկոսը, որ պիտի ստանա գանձարանը): Եվ այսպես ռուս իշխանությունը Անդրկովկասի հայ-թուրքական պրովինցիաներում նախ ճորտական դրություն ստեղծեց, ինչպես այդ արավ Ուկրաինայում, ապա ազատագրեց ճորտերին, միլիոններ կորզելով ժողովրդից հօգուտ «արիստոկրատական սկզբունքի»* («аристократическое начало»)*:*

1886 թ. մարդահամարով կիսաճորտական վիճակի մեջ եղող հայ գյուղացիների քանակը հավասար էր 170 հազարի, որ կազմում էր հայ գյուղացիության ընդհանուր քանակի 24 %-ը: Հայ կիսաճորտական գյուղացիության շինքին նստած դասը գլխավորապես թուրք ազգության էր պատկանում: Միմիայն Երևանի նահանգի Նախիջևանի գավառում 50 բեկապատկան հայ գյուղեր կային 1886 թ. (3105 ծուխ, 24256 շունչ), որոնց տերերը բացառապես թուրքեր էին: Թիֆլիսի նահանգում այդ նույն թվականին կային 55 կալվածատիրական հայ գյուղեր (1875 ծուխ, 11203 շունչ), որոնք համարյա բացառապես վրացիներին էին պատկանում: Այս փաստերը իմիջիայլոց ջուր են մաղում նրանց գլխին, որոնք հայ անվան հետ անպայման կապում են և շահագործողի հատկությունը: Հայ գյուղացին ավելի շատ էր շահագործվում: Եվ նրան շահագործում էին հայ, թուրք և վրացի կալվածատերերը:

*) Материалы для изучения эконом. быта госуд. кр. Закав. края, т. 1, Тифлис, 1885, стр. 461–469.

Կալվածատերի լուծը ծանր նստեց հայ գյուղացիության հոգու կորովի և նկարագրի վրա: Նա դարձավ հեղինակության գերի և ձեռներեցությունից զուրկ մի մասսա:

Լավ վիճակ չունեցավ և արքունի կոչված հողերի վրա նստած հայ գյուղացիությունը: Նա իր հերթին կորացած էր պետության խնամակալության և հարկերի ու բեկառի (натуральные повинности) *տակ: Այժմ պետությունը կամենում է նույնպես փրկագործման ենթարկել իր հողերը, այսինքն գյուղացիներից տասնյակ միլիոններ կորզել և նրանց ձեռքի հողը գյուղացիական սեփականություն հռչակել: Այդ խմաստով 1913 թ. օրինագիծ կա մտցված Պետական Դումա: Պատերազմը արգելք եղավ նրա քննության և ընդունման: Հավանորեն մոտ ապագայում այդ օրինագիծն օրենք կդառնա և գյուղացին գլուխը քարշ կկանգնե վաշխառուի դռանը:* «Ён достанет», *— ասել է դեռևս Շչեդրինը:*

V.

Նոր տիրապետությունը ավելի շատ շահեկան եղավ հայ ազնվականության և վաճառական դասի համար: Սակայն նա շահեկանությունից բացի կործանեց այն սերտ դաշնակցությունը, որ մինչև այդ արտաքին բռնավորական ճնշումների շնորհիվ գոյություն ուներ հիշյալ երկու խավերի և հոգևորականության մեջ: Գոնե սա կարելի է հաստատապես պնդել ազնվականության վերաբերմամբ, իսկ լքել հոգևորականության թիկունքը՝ դա նույնիսկ մոտիկ անցյալում նշանակում էր ձեռնպահ մնալ ազգային-կուլտուրական կյանքում, անգիտանալ այդ կյանքը:

Ռուսաց տիրապետությունը անչարժ ժառանգական կալվածների տեր դարձրեց հայ ազնվականությունը: Բայց նա ավելի շահեկան եղավ, բանալով այդ դասի առջև պետական ծառայության ասպարեզը: Անցավ երեք-չորս տասնյակ տարի և հայ նահապետական ազնվականության ծոցից դուրս եկան անվանի զորապետներ և այնպիսի մինիստր, ինչպես Մ. Տ. Լորիս-Մելիքովն էր: Սակայն ազգի դեմ հարուցած ընդհանուր հալածանքները եկան այդ ասպարեզը փակելու հայ ազնվականության առջև և նախորդ դարի 80-ական թվականներից սկսած նրա տված պաշտոնյաների քանակը կամաց-կամաց պակասեց: «Кавказский Календарь» *պաշտոնական հրատարակության տված տեղեկությունները այդ մասին, որ բերում ենք մեր մշակությամբ, ցույց են տալիս Անդրկովկասի քաղաքացիական հիմնարկությունների հայ պաշտոնյաների քանակի հետևյալ վայրէջքը. 1877 թ. (փոխարքայություն Մեծ. իշխ. Միխայիլ Նիկոլաևիչի) եղել է 523 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (2365) 22,1%, 1886 թ. (կառավարչապետ իշխ. Դոնդուկով-Կորսակով, հալածանքի առաջին շրջանը հայերի դեմ) եղել է 661 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (3217) 20,5%, 1897 թ. (նոր պաշտոնի անցած իշխ. Գոլիցինի ժամանակ) եղել է 719 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (4065) 17,6%, իսկ 1901 թ., երբ իշխ. Գոլիցինը նորանոր չարիքներ էր նյութում հայերի դեմ, եղել է 617 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (4917) 12,5%: Ահա այսպես 1877 թ.՝ 22,1%, իսկ 1901 թ.՝ 12,5%:*

Այստեղ նկատենք, որ հայ պաշտոնեությունը բացառապես չէր որդեգրվում ազնվականներից: Պետական ծառայության էին ձգտում և հոգևորականների զավակները, և վաճառականության նոր սերունդը, անգամ գյուղացիները, սակայն ըստ մեծի մասին ազնվականներն էին նրա երկրպագուները: Հալածանքն ուղղված էր այս ասպարեզում ոչ միայն հայ տարրի դեմ, այլև նա այնպիսի բնույթ ուներ, որ հնարավորություն չէր տալիս հային աչքի ընկնող տեղ բռնելու բյուրոկրատական սանդուղքների վրա:

Իսկ ընդհանրապես ի՞նչ կապ էր պահպանում հայ ազնվականությունը ազգի հավաքական մարմնի հետ, ինչպե՞ս էր գործադրում իր ազդեցությունը այդ մարմնի կարիքների բավարարման խնդրում: Այստեղ պիտի ասենք, որ հայ ազնվականությունը և ծառայող դասը միշտ էլ եղել են կառավարության ձեռքում կույր գործիք ճնշելու նրա ազգային-կուլտուրական անհատականությունը: Հիշենք, որ հայ ազնվականության միջից դուրս եկավ զինվորական հռչակ հանած իշխ. Մաղաթովը (ըստ կոմս Պասկևիչի՝ «отъявленный корыстолюбец»), *որ Երմոլովի առաջ փաստաբանում էր, թե հայ գյուղացիությունը ճորտական վիճակ է ունեցել պարսկական տիրապետության շրջանում: Հիշենք իշխ. Վ. Օ. Բեբուդովին (1791–1858), որը լինելով 1829–1838 թթ. կառավարիչ Հայոց շրջանի (այժմյան Երևանի նահանգ), ճնշումներով կաթողիկոս ընտրել տվեց կառավարության սիրելի Հովհաննես Կարբեցուն, որը մի ապիկար անձ լինելով, անկարող եղավ պաշտպանել իր հոտի ազգային շահերը: Իզուր չէր իշխ. Վորոնցովը 1854 թ. Կովկասից հեռանալիս գրում իր տեղապահ գեն. Ռեադին, թե հայ ազնվականության բարձր տոհմերին արդեն ռուսացած և ռուսական գործի մարդիկ կարելի է համարել*): Այդ տոհմերի ներկայացուցիչները իրանց ազգային ծագումը հիշում էին այն ժամանակ, երբ կարիք էր զգացվում նրանց միջոցով հայ ժողովրդի շինքին փաթաթել այս կամ այն կարգադրությունը, կամ թե այդ ժողովրդին մղել դեպի արտաքին թշնամին: Այդպես չէ՞ր միթե բոլոր ռուս-թուրքական պատերազմների ժամանակ:*

Եվ այսպես հայ ազնվականությունը խորթացավ ազգի ընդհանրությունից, դարձավ դրսից եկած թելադրանքների գործիք: Նա ազգի սրտացավ առաջնորդը չեղավ և մասն չունեցավ նրա հասարակական իդեալների դարբնման մեջ:

Իսկ հասարակական ի՞նչ ուղի բռնեց հայ վաճառական դասը, որ հին ժամանակ համընթաց էր գործում հայ հոգևորականության և ազնվականության հետ:

Ռուսական տիրապետությունը այս դասի համար դարձավ նյութական բարիքի հորդահոս աղբյուր: Նախորդ դարի 30-ական թվականների ռուս հետազոտողը հետևյալ վկայությունն է տալիս Թիֆլիսի հայերի վերաբերյալ. «Նրանք տիրել են Թիֆլիսի և ողջ Անդրկովկասի առևտրին, կատարում են ամեն կարգի հանձնարարություններ, իրանց ձեռքին ունեն համարյա բոլոր կապալները և զորքի մատակարարման գործը: Նրանք թարգմաններ են, զե-

*) Акты, т. X, № 71.

կուցանողներ ու գործակալներ: Մի խոսքով, ուր շահի հնարավորություն կա, այնտեղ են և հայերը»):*

*Այս տեղեկությունների համաձայն պատկեր է տալիս հայ պատմաբան Ալ. Երիցյանը. «Հարկ է ասել, որ Պասկևիչը (1827–1831) ավելի ձեռնտու էր համարում զորաց թե պաշարի մատակարարությունը և թե տնտեսական մյուս պահանջները հանձնել աճուրդով մասնավոր անձանց, քան թե կատարել առաջվա ժամանակների պես տերության պաշտոնեից ձեռքով: Շնորհիվ այս ներմուծած կարգ ու կանոնների, օսմանյան պատերազմում Պասկևիչի արած տնտեսական ծախքը հազիվ հասավ վեց միլիոն ռուբլի թղթադրամի, որ համեմատաբար շատ քիչ էր: Այդ կարգ ու կանոնները ստեղծեցին և կազմակերպեցին ժողովրդի մեջ մի առանձին դասակարգ «փոդրաթչի» անունով, որ միանգամայն կայացած էր հայերից: Սրանց էր հանձնված զորքերի մատակարարությունը, ճանապարհների հարդելը, շինությունների կառուցանելը, ծանրություններ տեղափոխելը և միով բանիվ այն ամենը, ինչ որ կարևոր էր բանակի տնտեսական կառավարության համար: Հայ «փոդրաթչիները» շատ նշանավոր ծառայություններ մատուցեցին ռուսական զորքին և ոմանք պատվանշաններով պարգևատրվեցան: Իրանց ճարպիկությամբ և աշխատասիրությամբ նրանք գրավել էին զորապետների ուշադրությունը և երբեմն այնպիսի փափուկ հանձնարարություններ էին կատարում, որ միանգամայն կվերաբերվին զինվորական և կամ քաղաքագետ պաշտոնեից: Ոմն Թիֆլիսեցի փոդրաթչի Քալենյան, որ բանակին միս մատակարարելով բավականին հարստություն վաստակեց, մի խումբ լրտեսներ էր պահում և նրանց միջոցով ամենաճիշտ տեղեկություններն էր հաղորդում սպարապետին թշնամու մտադրության մասին: Միշտ զորաց հետ լինելով և շատ անգամ էլ իրանց անձը վտանգի ենթարկելով, մի քանի փոդրաթչի հայեր կարճ միջոցում նշանավոր հարստության տեր դարձան և շուտով փոդրաթը այնքան հրապուրիչ դարձավ, որ արհեստավորից սկսած մինչև աստիճանավորը, թողնելով յուրյանց սովորական պարապմունքը, հետամուտ էին փոդրաթ գտնելու և այդ միջոցով հարստանալու: Թեև փոդրաթի դիմողները ամենքը չհարստացան, և շատ շատերն էլ միանգամայն վնասվեցին, բայց մի քանի օրինակների պատճառով հասարակաց բերանում «փոդրաթչի» և հարուստ բառերը հոմանիշ դարձան: Այդպիսով ահա ժողովուրդի այս նոր դասակարգը յուր արտաքին փայլով պատվելի դիրք բռնեց և ռամիկների աչքում գերադասվում էր նաև ազնվականների կարգից»**): Նկարելով այս պատկերը, Ալ. Երիցյանը վշտացած ասում է, որ «փոդրաթչիները» իրանց զեխ կյանքով, անբարոյական արարքներով և օտարամոլությամբ հայ ազգի անունը կոտրում էին օտարների առջև, որ նրանք օրեցօր խորթանում էին ազգի հավաքական մարմնից:*

Դարձյալ մի վկայություն, որ պատկանում է փոխարքա իշխ. Վորոնցովին (1844–1854): Իր տեղապահ գեներալ Ռեադին թողած հրահանգի մեջ նա գրում է (1 մարտի 1854 թ.). «Հայերն այստեղ կառավարության գլխավոր

---

*) Обозрение Российских владений за Кавказом, ч. I, С. П. Б., 1836, стр. 199.

**) *Ալ. Երիցեան. Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դ., հ. I, Թիֆլիս, 1894, էջ 442–447:*

գործիքն են կապալների և հանձնարարությունների համար: Նրանց մրցումը իրար հետ իջեցնում է գները մեր օգտին: Հայ առևտրականների մեջ կան անձինք, որոնք արժանի են առանձին ուշադրության, ինչպես օրինակ պատվավոր քաղաքացիներ Արշակունի և Միրիմանյան, որոնք շահավետությամբ իրանց և գանձարանի համար՝ վերցրած ունին Սալիանի ձկնորսարանի ահագին կապալը, տեղական (այսինքն Թիֆլիսի – Դ. Ա.) քաղաքագլուխ Սվեչնիկյանը և մանավանդ նահանգային քարտուղար և ազնվական Հովհաննես Միրզոյանը, փորձառու, ջանասեր մի մարդ՝ միշտ պատրաստ, որքան հնարավոր է քիչ շահով իր համար, օգտակար լինել կառավարությանը: Նա մեզ մատուցել է շատ խոշոր ծառայություններ, իր վրա վերցնելով այնպիսի գործեր, որոնց համար ցանկացողներ չկային, կամ թե գտնելով այդպիսիները և աջակցելով նրանց իր գրավականով»):*

Ի՞նչ են ցույց տալիս այս վկայությունները: Որ հայ վաճառական դասը գանձ է ժողովում կառավարության տաքուկ թևի տակ: Եվ մենք գիտենք, որ երկար ժամանակ Անդրկովկասում նա ոչ միայն զորքին պաշար մատակարարողն էր, որ ինքնին մի հորդահոս աղբյուր էր հարստանալու համար, այլև պետության պատկանող աղի, նավթի և ձկնորսարանների կապալառուն, մինչև իսկ մետաքսահարկի ժողովողը: Այսպես է ի միջի այլոց կազմակերպվել հայ առևտրական կապիտալը: Նախորդ դարի 60-ական թվականներից նա սկսում է արդյունաբերական և ապա ֆինանսական դառնալ: Այստեղ էլ նա սկզբում վայելում է կառավարության հովանավորությունը:

Մի շարք պատճառներով հայ կապիտալի կուտակումը և բարգավաճումը կատարվում է հայերի պատմական հայրենիքից հեռու, այսպես ասած հայկական գաղութներում: Թիֆլիսը ամբողջ Կովկասի վարչական կենտրոնն էր և որպես այդպիսին՝ նպաստավոր վայր էր առևտրի համար: Հայ վաճառականը այդտեղ շտապեց: Մերձկասպիական գավառները հարուստ էին մետաքսով, տորոնով (марена), *աղով և նավթով: Այդ երկիրը շնորհիվ Կասպից ծովի հեշտ հաղորդակցության մեջ էր ներքին Ռուսաստանի հետ, և հայ վաճառականը կասպիական ափերը դիմեց: Այսպես հերթը հասավ նաև Փոթիին և Բաթումին, երբ նրանք դարձան Կովկասի առևտրական պորտերը Թուրքիայի և հարավարևմտյան Եվրոպայի համար: Բուն հայ երկրում մնաց մանր առևտրականը կամ շատ-շատ մի քանի խոշոր առևտրական տներ: Հաշտարխանում և Մոսկվայում, հայկական այդ հեռավոր գաղութներում, ավելի շատ հայ կապիտալ կար կենտրոնացած, քան ամբողջ Երևանի նահանգում, որ հայության կենտրոնն է:*

Եվ ի՞նչ փոխհարաբերություններ պիտի ստեղծեին հայ առևտրաարդյունաբերական դասակարգի և ազգային ժողովրդական մարմնի մեջ այս պայմանները: Այն, որ առևտրաարդյունաբերական դասակարգը տակավ առ տակավ պիտի խորթանար ժողովրդական զանգվածից, չպիտի տոգորվեր նրա ազգային ապրումներով, միջոցներ չպիտի ձեռք առներ դեմ կանգնելու այն բոլոր կառավարչական հարվածներին, որոնք նպատակ ունեին ազգային տեսակետից դիմազուրկ անել հայ ժողովրդին: Մի՞թե կառավարական տաքուկ թևի տակ զարգացած խավը կհամարձակվեր բողոքող և դիմադրող լինել: Եվ ին-

*) Акты, т. X, № 71.

չո՞ւ համար անել այդ: Զէ՞ որ հայ ժողովուրդը ոչ խոշոր սպառողական ուժ էր, ոչ էլ այդ կապիտալի համար միակ աղբակից տարրը: Հայ կապիտալը զորանում էր ավելի շատ օտար հորիզոնների տակ և նրա կրողները կոսմոպոլիտ էին, կամ իշխանության առջև խոնարհ հաճոյացողներ: Այդպես մնաց հայ կապիտալիստ դասակարգը և այն ժամանակ, երբ արդեն մտահոգվում էր շղթաներ դնել նրա թռիչքներին: «Եթե սկզբում, – ասված է մի պաշտոնական հրատարակության մեջ, – հայերի գործունեությունը ճանաչվել է օգտակար, որովհետև նրանք, լինելով Թիֆլիսի նահանգի վրացիներից ավելի եռանդուն և ձեռներեց, իսկ տեղական մահմեդական բնակչությունից ավելի զարգացած, քիչ չեն նպաստել երկրի առևտրի ու արդյունաբերության բարգավաճման, այժմ, երբ հայերի թիվը հասել է Անդրկովկասի ողջ բնակչության 20 տոկոսին, նրանց գործունեության զարգացումը այլևս չպետք է ցանկալի համարել: Այդ տարրը, լինելով միաձույլ և գործելով միաբան, ցույց է տալիս շոշափելի գերակշռություն մյուս ժողովուրդների նկատմամբ և սպառնում է մերձավոր ապագայում իր ձեռքը կենտրոնացնել երկրի ողջ առևտուրն ու արդյունաբերությունը ի վնաս բուն ռուս ազգաբնակչության շահերի, ազգաբնակչության, որի քանակը Անդրկովկասում 8 անգամ պակաս է հայկականից»):*

Այսպես էր դատում ռուս կառավարությունը Պլևեի և Գոլիցինի ժամանակ: Եվ սա մի կարճատես և վտանգավոր քաղաքականություն էր հենց բուն ռուս շահերի համար, քանի որ այժմ գաղտնիք չէ, որ Մերձավոր Արևելքում միմիայն հայերն են անկեղծորեն կապված ռուս պետականության հետ: Այսպիսով բյուրոկրատիան կասկածի տակ առավ իր կողմից այնքան հովանավորված հայ առևտրաարդյունաբերական դասակարգը և հալածանք սկսեց նրա դեմ: Բայց ի՞նչ դիրք բռնեց վերջինս: Բողոքե՞ց, հակակառավարչակա՞ն դարձավ: Եվ ոչ մեկը: Նա մնաց նույն ռուսական պետական իմաստության երկրպագուն: Նա ջանք չխնայեց էլ ավելի շատ գունավորվելու ռուսական գույնով, խորթացնելով իրան և իր սերունդը մայրենի միջավայրից: Հայկականը հալածվեց նրա տնից: Նա ամուր փարեց ռուս լեզվին և ռուս կրթությանը: Հարազատ ազգի համար նա պահեց մի ավանդական ազգային սովորություն՝ բարեգործություն անել: Զկարծեք թե կամովին. ոչ, հանդիսավոր դիմումներից հետո միայն կամ ժողովրդական աղետի ժամանակ, երբ ամենուրեք խոսվում և աղերսվում էր: Հայ առևտրաարդյունաբերական դասը չտոգորվեց ազգային իդեալներով. նա իր կապը ազգության հետ վերածեց կրոնականի: Այո, այդ դասը ազգային գույն չունի, այլ նա միայն կրոնի միջոցով է կապված հայության հետ:

Ինչո՞ւ այդպես եղավ: Զէ՞ որ մենք ասացինք, որ նա զարգացավ պետության տաքուկ թևի տակ և բուն հայրենիքից հեռու: Նա իր նյութական զորությամբ իսկի սագական էլ չէ հայ ողորմելի միջավայրի համար: Նրա համար անհրաժեշտ է բաց ունենալ ամբողջ պետության շուկաները: Նա մեծ նավ է դարձել, իսկ մեծ նավին հարկավոր է մեծ նավարկություն:

Այս պայմաններում, կրկնում ենք, խոսք չի կարող լինել հայ խոշոր բուրժուազիայի ազգային իդեալների մասին: Դրանք գոյություն չունեն: Խոսք

---

*) Материалы по вопросу о распространении действий Крестьянского Поземельного Банка на Закавказский край, С. П. Б, 1904, стр. 130–131.

կարող է լինել միմիայն այդ դասակարգի և նրան հարող ինտելիգենցիայի ապազգայնության մասին, իսկ դա հայոց հարց չի կազմում, և մենք փակում ենք այս գլուխը:

VI.

Ի՞նչ էր հայ հոգևորականությունը պարսկական տիրապետության ներքո և ի՞նչ էվոլյուցիա կրեց նա ռուսական տիրապետությունից հետո:

Պարսկական տիրապետության շրջանում հայ հոգևորականությունը ազգը ներկայացնող դասն էր: Նրա գլուխը, ամենայն հայոց կաթողիկոսը, հաստատվում էր պարսից շահի և Թուրքաց սուլթանի հրովարտակներով: Թե կաթողիկոսը և թե առհասարակ հոգևորականությունը ժողովրդական ընտրությամբ էին պաշտոնի անցնում: Հոգևորականությունը և եկեղեցին պահվում էին հավատացյալների հոժարակամ նվիրաբերությամբ և կալվածներից ստացված հասույթով: Հոգևորականության պարտավորությունների մեջ էր մտնում ոչ միայն հայ ազգի կրոնական, այլև կրթական-կուլտուրական պետքերի հոգացումը: Ավելին. թույլատրվում էր հայերին իրանց դատական վեճերի համար դիմել կաթողիկոսի և առհասարակ հոգևորականության դատաստանին): Թե հոգևորականությունը և թե եկեղեցական կալվածները ազատ էին հարկերից:*

Չնայած իր արտոնյալ վիճակին, հայ հոգևորականությունը պարսից տիրապետության ժամանակ շատ բան չէր կարողանում անել ժողովրդի համար: Ինքը՝ այդ հոգևորականությունը, խարխափում էր տգիտության և չքավորության մեջ, որովհետև այն, ինչ խոստացվում էր հանդիսավոր ֆերմաններով, ամենակոպիտ կերպով ոտնահարվում էր կյանքի մեջ: Հայոց եկեղեցու կենտրոնը՝ Էջմիածնի վանքը և նրա միաբանությունը իր ընդհանրական կաթողիկոսով՝ պարսից ձեռքում նյութական շահագործման մշտական օբյեկտ էր: Էջմիածինը դարձել էր մի վայր, ուր աշխարհի ծայրերը ցրված հայությունից առատ նվիրաբերություններ էին տեղում: Նա նման էր հրեական Սողոմոնի տաճարին, որը իր տուրքն էր պահանջում Իսրայելից: Եվ տեսեք, թե որքան էր պարսկական իշխանությունը հարգում Էջմիածնի իրավունքները. նրա ուխտավորները պաշտպանություն էին գտնում և ազատ էին մաքսերից. նրա նվիրակները, որոնք այցելության էին գնում օտար երկրներ և հարուստ նվերներ ժողովում տարաբնակ հայությունից, նույնպես ազատ էին մաքսից. անգամ արգելվում էր քննել նրանց իրերը: Եվ այս բոլորը նրա համար, որ Էջմիածնի ուղին բռնած ոսկին ու հարստությունը չընկնի մանր-մունր սահմանակալ պաշտոնյաների ձեռքը, այլ որևէ պատրվակով մի գեղեցիկ օր փոխադրվի կամ շահի, կամ նրա Երևանի փոխարքա խանի սնդուկը: Արդեն տեսանք, որ Ղուկաս կաթողիկոսը (1780–1799) 1795 թ. 100 հազար ռուբլի տվեց Աղա-Մահոմեդ-խանին, որով միայն կարողացավ փրկել Էջմիածնի վանքը կործանումից:

Ռուսական տիրապետությունը վերջ տվեց այս նուրբ և անխնա շահագործմանը: Նա մյուս կողմից ճանաչեց հայ եկեղեցու և նրա պետի՝ ամենայն հայոց կաթողիկոսի դարերով սրբագործված իրավունքները: 1836 թ. մարտի 11-ին հրատարակվեց հայ եկեղեցու վերաբերյալ օրենքը, որ այսօր էլ պահպանում է իր ամբողջ ուժը: Այդ օրենքը հայ եկեղեցուն տալիս է ինքնավարության իրա-

*) *Սիմէոն կաթողիկոս. «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 122:*

վունք: Հոգևորականությունը և նրա պետը միմիայն ժողովրդական ընտրությամբ կարող են պաշտոնի անցնել: Եկեղեցու կազմակերպությանը վերապահվում է իրավունք հոգ տանել հայ ժողովրդի հոգևոր-կրթական պետքերի համար: Այդ կազմակերպությունը իր տեղական ճյուղերով ճանաչվում է պետական հաստատություն (Էջմիածնի Հայ-Լուսավորչական Սինոդը, Թեմական Առաջնորդը, Կոնսիստորիան և այլն): Այսպիսով 1836 թ. մարտի 11-ի օրենքը կարգավորություն էր մտցնում հայ եկեղեցու խարխլված կազմակերպության մեջ: Ճիշտ է, այդ օրենքը չէր սրբագործում բոլոր հին ավանդական սովորությունները, բայց նա հնարավորություն էր տալիս մի կրոնական համայնքի ինքնավար կերպով կարգավորելու իր հասարակական-կրոնական գործերը:

Ռուսաց կառավարությունը սկզբում չէր կամենում նսեմացնել հայ եկեղեցու նշանակությունը: Ընդհակառակը, նա ցանկալի էր համարում, որ Էջմիածինը ձգող ուժ դառնա Պարսկաստանի և Թուրքիայի հայության համար: Այդ էր պահանջում նրա Մերձավոր Արևելքի քաղաքականությունը: Ճիշտ է, նա կամենում էր եկեղեցու գլուխ ունենալ կամակատար մարդկանց և ներշնչումներ էր անում այդպիսիների ընտրության համար, ինչպես այդ եղավ Հովհաննես Կարբեցու ժամանակ (1831–1842), բայց արտաքուստ միշտ պահպանում էր հարգալից վերաբերմունք: Պատահում էր, որ Կովկասի ավելի հեռատես կառավարիչները դեմ էին գնում ընտրական ճնշումներին և թելադրանքներին, բարձր գնահատելով հայերի դերը ռուսական արևելյան քաղաքականության համար: Այդպես վարվեց, օրինակ, իշխ. Բարյատինսկին (1857–1862), հրաժարվելով ճնշումներ գործադրել կաթողիկոսական ընտրությունների ժամանակ, նույնիսկ կողմնակից լինելով, որ կաթողիկոս ընտրվի մի թուրքահայ հոգևորական):*

Մենք տեսանք, որ 1836 թ. մարտի 11-ի օրենքը հայերին եկեղեցական ինքնավարություն տալով, նրանց հոգևոր-կուլտուրական պետքերի հոգացողության պարտավորությունը բարդեց հոգևորականության վրա: Բայց կարո՞ղ էր հայ հոգևորականությունը շինարար գործ կատարել այդ ուղղությամբ: Նա ժառանգել էր պարսից տիրապետության շրջանից տգիտություն, անհոգություն, կաշառակերություն և կամայական վերաբերմունք դեպի հասարակական գումարները: Մյուս կողմից պատերազմները, նեղություններն ու կողոպուտները սպառել էին Էջմիածնի նյութական միջոցները: Պետք էր որոշ ժամանակ անցներ, որ եկեղեցական կազմակերպությունը բարոյական և նյութական ուժ հավաքեր ի կատար ածելու իր վրա դրած պարտականությունները: Այդպես էլ եղավ: 25–30 տարի անցավ օրենքի հրատարակումից հետո, մինչև որ եկեղեցական կազմակերպությունն սկսեց կանոնավոր գործունեություն ցույց տալ: Այդ մոմենտը զուգադիպեց ռուսական հասարակական կյանքի մեջ հայտնի 60-ական թվականներին, երբ պետության համայն կյանքի մեջ զարթոնքի շարժում սկսվեց: Շարժվեց և հայ աշխարհիկ ինտելիգենցիան, որն սկսեց քարոզել կազմակերպված ազգային կյանքի անհրաժեշտությունը և այստեղ բախվեց հայ եկեղեցու կազմակերպության հետ: Հայ եկեղեցին պիտի եռուն կյանք ցույց տար, պիտի ապացուցաներ իր անհրաժեշտությունը ազգի համար, պիտի ընդգրկեր հասարակական օգտավետ գործունեություն, որ ավե-

---

*) Акты, т. XII, № 463.

լորդ չսեպվեր հայ աշխարհիկ հասարակության առջև: Նա ստիպված էր ձեռք զարկելու օրենքի իր վրա դրած պարտականությունների իրագործման, այն է՝ լծվելու լայն կրթական աշխատանքի:

Նա այսպես էլ վարվեց: Մատթեոս կաթողիկոսը (1858–1865) ստեղծեց դպրոցական աշխարհիկ և ընտրովի հոգաբարձություններ և ուսումնարանների կրթական ու նյութական հոգսը նրանց հանձնեց, հոգևոր իշխանությանը վերապահելով բարձր հսկողությունը և կոնտրոլը: Դա իհարկե նրա անհատական մտքի ու կամքի արդյունքը չէր: Նա ստիպված էր տեղի տալ ժողովրդական պահանջի առջև և այդ ձևով վերջ տալ աշխարհիկ հասարակության տրտունջներին: Սակայն հենց որ հայ հոգևորականությունը հրաժարվեց կաստա դառնալու ձգտումներից և միացավ աշխարհիկ ինտելիգենցիային՝ միասին տանելու ազգի կրթական-կուլտուրական գործը, նա կասկածելի դարձավ բյուրոկրատիայի աչքում և այնուհետև անդադրում հալածանքի ենթարկվեց: Կառավարությունը ձգտեց նսեմացնել հայ եկեղեցու պետի նշանակությունը, անգիտանալ նրա իրավունքները, արգելքներ հարուցանել դպրոցական գործի զարգացման դեմ և այլն, և այլն: Հայոց կաթողիկոսությունը իհարկե չէր կորցրել իր նշանակությունը մերձարևելյան արտաքին քաղաքականության համար: Եթե դեռևս հարգանք մնում էր դեպի այդ հաստատությունը, ապա միմիայն շնորհիվ հիշված քաղաքականության պահանջների: Բյուրոկրատիական ռեժիմը կողմնակից էր կատարյալ հարթեցման (нивелировка)*: Նա չէ, որ պիտի համբերեր ինչ-որ հայերի եկեղեցական ինքնավարության, բայց կար արտասահմանյան հայությունը և պահանջվում էր հաշվի նստել նրա ձգտումների և տրամադրության հետ: Այսպես թե այնպես 60-ական թվականներից սկսած հայոց եկեղեցին և նրա ստեղծած կուլտուրական հաստատությունները սկսեցին վայելել բյուրոկրատիայի առանձին ուշադրությունը: Հայերի դեմ հալածանքը ավելի շատ սաստկացավ այս կողմից: Բայց մինչև այդ հալածանքների էության անցնելը մենք պետք է մի ակնարկ նետենք հայ աշխարհիկ ինտելիգենցիայի և նրա քարոզած վերածնության վրա:*

VII.

Հայերի հասարակական վերածնությունը սկիզբն առավ նախորդ դարի 50-ական թվականներին: Ի՞նչ գործոնների ազդեցության տակ եղավ այդ և ի՞նչ բովանդակություն ուներ նա: Հայերի վերածնությունը մի կողմից կապ ուներ ընդհանուր հասարակական շարժման հետ, որ տիրում էր Ռուսաստանում, մյուս կողմից նա ուներ իր ներքին, տեղական դրդապատճառները: Մենք կխոսենք այդ դրդապատճառների մասին:

Տեսանք արդեն, թե ինչպես կազմակերպվեց հայ առևտրական կապիտալը, որը ուռճանալով՝ 60-ական թվականներից սկսեց նշաններ ցույց տալ արդյունաբերական և ֆինանսական դառնալու: Այդ առևտրական կապիտալը կատարյալ քայքայում մտցրեց երկրի ինքնամփոփ տնտեսակարգի մեջ: Նա սկսեց Ռուսաստանից (Մոսկվայից և Նիժնի-Նովգորոդից) Անդրկովկաս ներմուծել ռուսական ֆաբրիկաների գործվածքներն և մյուս պատրաստի իրերը (готовые изделия)*, արտահանելով նույն այդ կենտրոնները մեր երկրի հում մթերքները (բուրդ, բամբակ, մետաքս, տորոն, կաշիներ և այլն): Հայ առևտրա-*

կան կապիտալի շավղով գնացին և ներքին Ռուսաստանից Անդրկովկասում հաստատված ռուս և այլազգի վաճառականները: Մոսկվայի ֆաբրիկանտները (Բարանով, Գուչկով, Պրոխորով, Զետուերիկով և այլն) իրանց ֆաբրիկաներից ելած ապրանքների հատուկ դեպո ստեղծեցին Թիֆլիսում, որը սաստկացնում էր մեր ծայրագավառի առևտրական մրցումը): Ռուսաստանից ներմուծված ապրանքները էժան էին, քանի որ ռուս ներմուծողները պրեմիա էլ էին ստանում գանձարանից: Էժանության հետ կար և զարդերի ու գույների գրավչությունը: Այս բոլորը եկավ սպանելու Անդրկովկասի տեղական տանուգործը: Ի. Շոպենը 30-ական թվականներին միմիայն Երևանի նահանգում հաշվել է 4297 ջուլհակ, որոնցից 3970 հայ, իսկ 327 թուրք**), այնինչ 1865 թ. այդ արհեստը գտնվում էր անկյալ վիճակում***):*

*Պետք է նկատել, որ Անդրկովկասում առևտուրն և արհեստը կազմակերպված էին համքարական միությունների մեջ, ինչպես այդ տեղի ուներ միջնադարյան Եվրոպայում: 1865 թ. Երևան քաղաքում գոյություն ուներ 26 համքարություն, Ալեքսանդրապոլում՝ 24, իսկ Թիֆլիսում՝ 80: Ռուսական իշխանությունը սկզբում արգելքներ չէր հարուցանում նրանց դեմ: Բայց դրությունը փոխվեց, երբ համքարությունները ոտքի կանգնեցին առևտրական կապիտալի հարվածների դեմ: Տեսնելով օր ավուր դժվարացող կյանքի պայմանները, համքարությունները աշխատում էին ավելի սեղմվել իրանց կազմակերպությունների մեջ և արհեստն ու առևտուրը դնել խիստ կանոնների տակ: Նրանց այդ ձգտումների դեմ արտահայտվում էին ազատ առևտրի կողմնակիցները և կառավարությունից պահանջում միջոցներ ձեռք առնել համքարությունների դեմ: Այս հողի վրա անպակաս էին խլրտումները, իսկ 1865 թ. Թիֆլիսում գործը հասավ հրապարակային պայքարի: Համքարությունները փակելով իրանց խանութներն ու արհեստանոցները, ամբոխով հարձակվեցին քաղաքագլխի տան վրա և ջարդեցին ու ոչնչացրին նրա կայքը, ապա հեռանալով քաղաքի մի ծայրը, բանակ դրին: Կառավարությունը զորք կանչեց և միմիայն զինական ուժի ներկայությունը և արյունահեղ ընդհարման երկյուղը ստիպեց համքարություններին քաղաք դառնալ և աշխատանքի կանգնել: Այս եղելությունը բավական էր, որ բյուրոկրատական մեքենան սկսեր գործել: Համքարությունները այժմ վտանգավոր դատվեցան և կառավարության կողմից: «Թիֆլիսի 1865 թ. փողոցային անկարգությունները, – գրում է բարոն Նիկոլայը, – ցույց տվին, որ այդ կերպ՝ առանց կառավարության կապի՝ միացած կորպորացիաները կարող են վնասակար լինել նաև հասարակական հանգստության համար»****):*

Եվ կառավարությունը հաստատեց այդ կապը: Նա լուծեց առևտրական համքարությունը, իսկ արհեստավորականների համար հորինեց արհեստավո-

---

*) Акты, т. X, № 184, 193, 194, 200 и 207.

**) И. Шопен. «Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской Империи», С. П. Б., 1852, стр. 843–850.

***) Сборник статистических сведений о Кавказе, Тифлис, 1869.

****) Отчет по Главному Управлению Наместника Кавк., Тифлис, 1873, стр. 118–119.

բական կանոնադրություն: Թիֆլիսի 80 համքարությունից մնացին 17, որոնք ենթարկվեցին կառավարության խնամակալությանն ու հսկողությանը:

Անդրկովկասի մնացած քաղաքներից մի երկուսում առևտրական կապիտալի առաջացրած հեղաշրջումը ստեղծեց կրոնական շարժում: Շամախում հայ արհեստավորները բողոքականություն էին ընդունում, առարկելով թե հայ-լուսավորչականները հետևում են շռայլ կյանքի: Ալեքսանդրապոլում դեպի բողոքականությունը հակում էին ցույց տալիս քեարգեահները (վարպետացու), այնինչ վարպետները մնում էին ամուր փարած հայ եկեղեցուն: Տնտեսական հակամարտությունը այսպիսով ընդունում էր կրոնական շարժման բնույթ:

Այս պայմաններում հայ ժուռնալիստը հետևյալն է գրում. «Մենք այստեղ (Թիֆլիսում) շատ անգամ լսում ենք մեր արվեստավորներից, համքարներից (գուցե և Ռուսաստանի հայերից ևս միևնույնը լինի լսվում), թե նոքա չեն կամենում երկար ժամանակ պահել յուրյանց որդիքը մեր այժմյան ուսումնարաններում այն պատճառով, որ այն ուսումով նոցա որդիքը հացի տեր չեն կարողանում դառնալ: Օրինավոր գանգատ: Ամենայն մարդ կարող է վկայել, որ այժմյան ուսումնարանների հաղորդածովը խեղճ աշակերտը ո՛չ մի գործ չէ կարողանում կատարել աշխարհի մեջ, օրինավոր կերպով ապրուստ ճարելու համար: Նրա ուսումը ոչինչ հարաբերություն չունի կենաց հանգամանքների հետ, ուսում է առել նա, սակայն այն մտքով, որ ասե, թե ուսում եմ առել: Հարցրեք այդ ուսումով պարոններին, կարո՞ղ են յուրյանց կյանքը ապահովել նյութական կերպով: Մենք կպատասխանենք նոցա կողմանե, բոլորովին ո՛չ: Ուսումը այլ է դեռևս մեզ համար, և այլ է աշխարհի մեջ ապրելը. ուսումնարանում երեխան ավարտում է յուր ուսման ընթացքը և կենաց ասպարեզ մտնելով, նոր է սկսում սովորել կենաց հանգամանքները և պայմանները»): Այստեղ հիշված ուսումնարանը հայ հոգևորականության ստեղծած կրթական հաստատությունն է: Նա կյանքի հետ չի ընթանում: Այսպես է հեղինակի միտքը: Իսկ կյանքը բարդացել է, ապրուստը դժվարացել: Ի՞նչ անել:*

*Եվրոպականացո՛ւմ, լսվում էր Մոսկվայից: Այդպիսի լոզունգ տվողը պրոֆ. Ստեփաննոս Նազարյանն էր (1812–1879), հայ վերածնության ամենաերախտավոր գործիչը: Եվրոպականացում կենցաղի և գոյության բոլոր կողմերով, մկրտություն եվրոպական իմացական ավազանում, կամ անդարձ կորուստ. այսպես էր ձևակերպել ժամանակի պահանջը այդ ռահվիրան: Իր գրական-լուսավորական գործունեության սկզբում նա այն կարծիքին էր, որ «ազգի օգուտը հառաջ տանելու համար ո՛չ ով ծառա չէ, ո՛չ ով պարոն չէ, այլ ամենեքյան պարտական են մշակ լինել, արդար և ջերմեռանդ մշակ՝ մեծատունը՝ յուր առատ արծաթովը, և գիտնավորը՝ յուր աշխատասեր գրչովը»**): Եվ սա վատ գինակցություն չէր մի ազգի վերածնության համար՝ խոշոր բուրժուազիա և ինտելիգենցիա: Սակայն Նազարյանը շատ շուտով համոզվեց, որ հայ խոշոր բուրժուազիան կենտրոնախույս ուժ է և չի մտահոգվում ազգի ճակատագրի մասին: Նա այն ժամանակ բուրժուազիայի փոխարեն դրավ հայ եկեղեցական դասը (1858 թ.) և սկսեց հոգևորականությունը և ինտելիգենցիան կոչել դեպի*

*) *«Կռունկ Հայոց Աշխարհի», 1862, նոյեմբեր, էջ 852–853:*

**) *Ս. Նազարեանց, «Վարդապետարան Կրոնի», Մոսկուա, 1853, էջ 10:*

ազգաշինություն: Բայց հոգևորականությունից նա տեսավ հալածանք և բուռ ըմբռնողություն իր պրոպագանդի նկատմամբ, մանավանդ երբ բացահայտորեն սկսեց պաշտպանել, թե կրոնը չէ հայությունը բնորոշող հատկանիշը: 1863 թ. Նազարյանը ինտելիգենցիային նոր դաշնակից է տալիս: «Մի ազգի գլխավոր ուժը և զորությունը հասարակի մեջ է», – գրում է նա: Եվ «հայկազյան ժողովրդի լուսավորությունը պիտո է լինի յուր հատուկ ձեռքի վաստակած վաստակը»): Ինչպե՞ս: Հայերը պետք է ընկերակցություններ կազմակերպեն՝ բարեգործական և կուլտուրական-լուսավորական: Ինքնօգնությունը պիտի լինի նրանց գլխավոր մտահոգությունը: Ինքնօգնությամբ դեպի եվրոպականացում: Այստեղ քաղաքականություն չկա, այլ պարզ լուսավորական աշխատանք: Պետությունը պետք է գոհ լինի, որ մի ազգ իր իսկ միջոցներով կամենում է զարգանալ և բարգավաճել: «Ռուսաստանը, – գրում է Ս. Նազարյանը, – կարող է ամենևին աներկբա լինել Հայոց ազգի դեպի նա անդրժելի հավատարմության մասին, և դորա ապացույցքը միշտ և հանապազ տեսել է նա: Տաճիկները, որպես մահմեդականք, յուրյանց հարաբերության մեջ դեպի Ռուսաստան թե շատ և թե փոքր միշտ կասկածելի են. վրացիք, թեպետև կարող չէին պահպանել յուրյանց ազատ դրությունը պարսիկների երեսից, այնուամենայիվ տրտնջում են և անգոհ են Ռուսաստանից, որ սա բավականացել չէ մի պաշտպանողական իշխանությամբ, այլ ստորադրել է նրանց յուր ստույգ հրամանակալության տակ: Բայց հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նրանց մի անտանելի, անարգական ստրկությունից, և բացել է նոցա առաջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»**): Հինգ տարի անց նա դարձյալ դառնում է այդ խնդրին. «Հայերս քաղաքական մտքով ռուս ենք, այսինքն Ռուսաց կայսեր հպատակք և անդամք այդ տերութենական մարմնի, և ունեմք նույն օգուտքը և վնասքը, ինչ որ ունի թագավորությունը ներքուստ և արտաքուստ»***):

Ահա այս հիմքերի վրա պիտի վերածնվեր հայությունը. քաղաքական լոյալություն, որովհետև առանց Ռուսաստանի հայերին սպասում է պարսկական դժոխքը, և ինքնօգնությամբ առաջ մղած կուլտուրական-լուսավորական շինարար աշխատանք: Կարող ենք վստահորեն պնդել, որ վերջին 50 տարվա ընթացքում հայերի հասարակական մտածողությունը դուրս չի եկել այս ծրագրից: Վերջապես դա կպարզվի մեր հոդվածի և հետագա գլուխներից: Ս. Նազարյանը ականատես եղավ իր ծրագրի ընդունելության: 1864 թ. հիմնվեց Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերությունը, որի հիմնադիր բժ. Դավիթ Ռոստոմյանը Նազարյանի ջերմ կողմնակիցներից էր: (Հիշյալ ընկերությունը՝ իբրև կուլտուրական-լուսավորական հաստատություն՝ խոշոր երախտիքներ ունի հայերի վրա):

Ս. Նազարյանը իր կուլտուրական վերածնությունը երևակայում էր իբրև ինտելիգենցիայի և «հայ հասարակի», այսինքն մանր առևտրական և արհեստավոր դասերի, մանր-բուրժուազիայի դաշնակցություն: Հայության հավաքումը հենց ընթացավ այդ ուղիով: Սակայն Ռուսաստանի քաղաքական

*) «Հիւսիսափայլ», 1863, դեկտեմբեր, էջ 3:
**) «Հիւսիսափայլ», 1859, յունուար, էջ 11–12:
***) Անդ, 1864, մարտ, էջ 227:

ռեժիմը ստիպեց, որ նոր հայությունը հովանավորություն փնտրե եկեղեցական կազմակերպության մեջ և իր ծրագրի իրագործումը առաջ մղե եկեղեցուն չնորհված ինքնավարության նորմաների շրջանակում: Չէ՞ որ հայը և հավատացյալ էր: Եթե նրան արգելվում է կազմակերպվել կուլտուրական աշխատանքի շուրջ իբրև հայ, իբրև ուրույն ազգության անդամ, ապա դա չի արգելվում, իբրև հայ-լուսավորչականի, իբրև քրիստոնյայի: Եվ արժե՞ր միթե արտաքին ձևի համար անգիտանալ միջուկը: Թող մնա հոգևոր դասի գերիշխանությունը, միայն թե դպրոցի և կուլտուրական հաստատության բովանդակությունը ներդաշնակե ժամանակի պահանջների հետ: Հայ հոգևորականությունը իր պաշտոնը ստանում է ժողովրդական քվեով և նա պիտի ընդուներ, որ եկեղեցին, բացի կրոնական հաստատությունից, դառնա և ժողովրդի կուլտուրական-լուսավորական գործի ղեկավարը: Այդպես էլ եղավ: Նոր հայությունը դարձավ զանազան խավերից ելած (разночинная) *ինտելիգենցիայի, մանր-բուրժուազիայի և հոգևորականության մի դաշնակցություն կուլտուրական բարգավաճման հողի վրա: Այս դաշնակցության նյութական ֆոնդը մնաց հավատացյալի հոժարակամ նվերը իր եկեղեցուն և բարենպատակ հաստատության, ապա եկեղեցու կալվածքներից ստացված հասույթը: Մի այսպիսի կազմակերպությամբ ռուսահայը ստեղծեց դպրոցների և այլ հաստատությունների ցանց և նույն այդ կազմակերպությանը ապավինած նա դիմադրավեց հետագայի կառավարական հալածանքներին:*

VIII.

Հիմա անցնենք հայ ժողովրդի հանուն կուլտուրայի և հանուն ազգային ինքնուրույն նկարագրի կրած մարտիրոսագրության:

1868 թ. Գեորգ Դ. կաթողիկոսը (1866–1882) հրատարակեց դպրոցական կանոնադրություն, որը ճանաչում էր ժողովրդի գերիշխող իրավունքը դպրոցական գործերի մեջ: Այդ կանոնադրության մեջ ասված է, որ ծխական դպրոցները կառավարվում են ժողովրդից ընտրված և թեմական իշխանության կողմից հաստատված հոգաբարձուների ձեռքով: Իսկ դպրոցների նյութականի մասին որոշվում էր. 1) ուսումնատուրք աշակերտների ծնողներից, 2) հոժարակամ նվիրատվություն և 3) տոկոսներ եկեղեցական դրամագլուխներից: Այս կանոնները թեթև փոփոխություններով 1868 թ. հետո հիմնաքար մնացին հայ եկեղեցական-ծխական դպրոցների: Եվ քանի որ դպրոցական գործը հանձնված էր ժողովրդին, ապա հասարակական եռանդը սկսեց ավելի շատ սպառվել նրա վրա:

*Հարկավ, հայ երեխաները միմիայն հայ եկեղեցական-ծխական դպրոցները չէին հաճախում, այլև պետական: Մի քանի թվական տեղեկություններ ցույց կտան, թե Կովկասի ուսումնարանական շրջանում ինչ քանակի հայ էր սովորում այս կամ այն կարգի կրթական հաստատություններում: Հայերը սովորում էին**):

*) *«Մշակ», 1915, № 181. մեր հոդվածը՝ «Հայութեան հաւաքական զօրութիւնը»:*

	1886 թ.	1890 թ.	1895 թ.	1900 թ.
Պետ. միջնակարգ դպր.	2166	2298	2869	5250
Հայ եկ. միջն. դպր.	1176	1068	1589	2024
Պետ. ստորին դպր.	5630	8651	9516	25858
Հայ. եկ.-ծխ. դպր.	4700	10733	19235	–

Այս թվերը իրանք քիչ բան չեն ասում, բայց նրանց կատարելապես ըմբռնելու համար պետք է դիմել նորից պատմության: Հայ դպրոցական գործը դեռ իր խանձարուրքի մեջ էր, երբ սկսվեցին բյուրոկրատական կասկածները և խնամակալական ձգտումները: 1872 թ. բարոն Նիկոլայը գրում էր. «Պետք է հիշել հայ դպրոցների բավական նկատելի զարգացումը, որոնք իբրև եկեղեցական-ծխական խուսափում են կառավարական հսկողությունից. այդ դպրոցները ընդհանուր առմամբ քիչ են նպաստում ուղիղ կրթության տարածման: Ուսուցումը նրանց մեջ հանձնվում է միանգամայն անպատրաստ անձանց կամ գտնվում է ծայրաստիճան տգետ հոգևորականության ձեռքին, ուստի և այն շոշափելի գումարները, որոնք զոհաբերվում են այդ դպրոցների համար եկեղեցական եկամուտներից, ինչպես և մասնավոր անհատներից ու հասարակություններից, կազմում են ապարդյուն ծախք՝ նվիրված թյուր գիտակցված ցեղային առանձնահատկության բավարարման»*):

Մի՞թե այստեղ ժպիտ չի առաջացնում բյուրոկրատիայի հոգսը ժողովրդական անարդյունավետ գործադրած գումարների մասին: Զէ՞որ բյուրոկրատիան ամենից շատ և ամենից անհաշիվ վատնողն է ժողովրդական միջոցների, բայց նա դառնում է հաշվարար և ժողովրդասեր, երբ խոսքը վերաբերում է «ցեղական առանձնահատկության» վրա գործադրած գումարներին:

Բյուրոկրատիան չկամեցավ հենց 70-ական թվականների սկզբին փակել հայոց դպրոցները, բայց նա հրատարակեց իր առաջին սահմանափակիչ կարգադրությունը 1874 թ. հուլիսի 19. «ա) որ բոլոր դպրոցներում ավանդվի ռուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ ավանդում են ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, ավանդվեն նաև ռուսաց պատմություն և աշխարհագրություն ռուսերեն լեզվով, բ) որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական հատկություններ»:

Այս կանոնների սահմաններում կառավարության ուսումնարանական իշխանությունները իրավունք ունեին կոնտրոլի ենթարկել նաև հայոց եկեղեցական-ծխական դպրոցները: Կոնտրոլից ազատ էին այն դպրոցները, որոնք նպատակ ունեին բացառապես հոգևորականներ պատրաստելու:

Այդ կարգադրությամբ բյուրոկրատիան իրավունք ստացավ տեղի անտեղի ձեռնամուխ լինել հայ եկեղեցական-ծխական դպրոցների գործերին: Եվ սկսվեց նրա խնամակալական և արգելառիթ գործունեությունը: Տեղի ունեցան գրագրություններ, բացատրություններ, պահանջներ և տրտունջներ, որոնք վերջ ի վերջո իրար դեմ հանեցին մի կողմից հայ հասարակությունը իր հոգևորականության առաջնորդությամբ, իսկ մյուս կողմից Կովկասի ուսումնարանա-

*) Отчеты по Главному управлению Наместника, стр. 280.

կան շրջանի հոգաբարձուին, որի ետևը կանգնած էր ներքին գործերի մինիստրությունը:

Գործը հասավ այնտեղ, որ բյուրոկրատիան 1884 թ. փետրվարի 16-ին հրատարակեց նոր կանոններ հայ դպրոցների գոյության և ուսումնական մասի վերաբերյալ: Այդ կանոնների հրատարակումը տեղի ունեցավ առանց պահպանելու մինչ այդ ընդունված ձևերը, այն է՝ կանխորեն չմացվեց հայ հոգևոր իշխանության կարծիքը: Նոր կանոններն էլ գալիս էին լայնարձակ իշխանություն տալու Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, ըստ որում ասված էր, թե «Ուսումնարանական Շրջանի Հոգաբարձուին թողնվում է, որ այն դեպքում, երբ նա գտնում է ուսուցիչներից կամ վարժուհիներից որևէ մեկին անհամապատասխան իր կոչման, դիմել հոգևոր վարչության՝ անմիջապես հեռացնելու այդ անձանց իրանց պաշտոնից և նրանց փոխարինելու ուրիշներով»:

Հետո իհարկե հոգաբարձուին իրավունք էր վերապահվում աջակցություն խնդրել Կովկասի կառավարչապետից և առհասարակ հայ հոգևորականության ներհակության դեպքում ստիպել կատարելու իր կամքը: Առհասարակ 1884 թ. կանոնները դժվարացնում էին հայ դպրոցների գոյության պայմանները, և Էջմիածնի լուսավորչական Սինոդը հրաժարվեց նրանց ընդունել և կիրառել: Սինոդը իր այդ քայլը պատճառաբանում էր նրանով, որ հայոց դպրոցների տերն ու տնօրենը կաթողիկոսն է, իսկ կաթողիկոսական գահը այդ ժամանակ Գեորգ Դ. մահվան պատճառով թափուր էր, ուրեմն և ինքը իրավատու չէ օրենքը ընդունելու: Նա խնդրում էր հետաձգել օրենքի գործադրությունը մինչև նոր կաթողիկոսի ընտրությունն ու հաստատությունը: Այդ իմաստով գրավոր դիմումներ անելուց բացի նա հատուկ պատգամավոր ուղարկեց Պետրոգրադ, սակայն չկարողացավ համոզել ներքին գործերի մինիստրը կոմս Տոլստոյին և Կովկասի կառավարչապետ իշխ. Դոնդուկով-Կորսակովին: Եվ հայոց ծխական դպրոցները, որոնց քանակը 1883 թ. 200-ից անցել էր և որոնց մեջ սովորում էին 12 հազարից ավելի երկսեռ մանուկներ, փակվեցին ոստիկանական միջոցներով:

1886 թ. այդ դպրոցների վերաբացման իրավունք ստացվեց: Դա մի սիրալիրություն էր, որ կառավարությունը արել էր նորընտիր Մակար կաթողիկոսին (1885–1891), որը նրա թեկնածուն էր համարվում: Հայոց դպրոցները նորից սկսեցին ընթանալ զարգացման ուղիով և բուժվել կրած հարվածից (1883 թ. նրանց մեջ սովորում էր 12 հազարից ավելի աշակերտ, իսկ 1886 թ.՝ 4700): Բայց ասված է՝ սապատողին գերեզմանը կարող է ուղղել: 1889 թ. նորից սկսվեցին ճնշումները, սահմանափակումները և բացատրությունները: Նախ պահանջվեց, որ հայ դպրոցի ուսուցիչները ցենզ ունենան պետական միջնակարգ դպրոցներից: Դա ընդունվեց հայ հոգևորականության կողմից, թեև դրանով հարվածվում էր նրա պահած միջնակարգ դպրոցների (սեմինարիաներ և Գևորգյան ճեմարան) պրեստիժը: Ապա պահանջվեց, որ եկեղեցական-ծխական դպրոցները պահպանվեն բացառապես եկեղեցական միջոցներով, թեև հայտնի էր, որ հայ եկեղեցին դարերով իր գոյությունը պահպանել է հոժարակամ նվերներով և որ եկեղեցուն տվողը տալիս է և նրա բացած դպրոցին: Սա մի միջոց էր կառավարության կողմից պարզելու, թե ինչ դրամագլուխների տեր է հայ եկեղեցին և ապա մի կարգադրություն էր, որ պիտի դեպի փակումը առաջնորդեր հայ դպրոցները:

1895 թ. դեկտեմբերին Կովկասի կառավարչապետը կարգադրեց՝ ուսումնարանական շրջանի հոգաբարձուին հանձնել հայոց ծխական դպրոցները: Ինքը հոգաբարձուն իր տարեկան հաշվետվության մեջ այսպես է նկարագրում այդ «կուլտուրական» արշավը. «Ժողովրդական դպրոցների տեսուչը տեղական վարչության ներկայացուցիչների կամ ոստիկանության գործակալների ընկերակցությամբ այցելում էր ուսումնարանը, առաջադրում ուսումնարանի ղեկավարին կամ հոգաբարձության պ. Կառավարչապետի վերոհիշյալ կարգադրությունը և պահանջում ուսումնարանը անմիջապես հանձնել տեղական կրթական տեսչության, կազմելով ընդհանուր ստորագրությամբ արձանագրություն այդ հանձնման մասին: Ցավելով պիտի ասել, որ ոչ մի ուսումնարանի հանձնում տեղի չունեցավ և հունվարից սկսած ժողովրդական դպրոցների տեսուչներից հասնում էին տեղեկություններ արձանագրություններով հանդերձ այն իմաստով, որ ուսումնարանի ղեկավարները մերժել են ենթարկվել նրանց առաջադրած պահանջներին, առարկելով, թե կարգադրություն չունեն իրանց բարձր հոգևոր իշխանությունից»):*

Ինչպիսի՞ կուլտուրական ուժ էր ոչնչացնում բյուրոկրատիան: 1895 թ. հայոց ծխական դպրոցների թիվը հասնում էր 240, որից երկդասյան տղայոց՝ 26, օրիորդաց՝ 23, խառն՝ 10, միդասյան տղայոց՝ 130, օրիորդաց՝ 28, խառն՝ 181: Այդ դպրոցների բյուջեն հավասար էր 263015 ռ.: Ուսուցանողների կազմն էր՝ կրոնուսույց 69, ուսուցիչ 330, վարժուհի 128, ընդամենը 527 հ.: Աշակերտության քանակը հավասար էր 19235 հոգու, որից տղա՝ 12616, կամ 65,6%, աղջիկ՝ 6619, կամ 34,4%:

Այդ դպրոցների շինությունները և ուսումնական պիտույքները գրավելուց հետո կառավարությունը 1898 թ. մարտի 26-ի օրենքով ձեռնամուխ եղավ գրավելու նրանց նյութական միջոցները: Բայց նա այստեղ խոշոր գումարներ չգանձեց, որովհետև հայոց դպրոցները պահպանվում էին ժողովրդի կողմից տարեցտարի տրվող հոժարակամ նվերներով: Սա այնպիսի նյութական ապահովություն էր, որ խարսխված էր ժողովրդի ջերմ համակրության վրա, իսկ կառավարությունը իր հալածական քաղաքականությամբ անկարող էր գրավել այդ համակրությունը և այն՝ նյութական միջոցներ դարձնել:

Հայ ժողովուրդը 1896 թ. հետո 10 տարի զուրկ մնաց մայրենի դպրոցից: Նրան իրավունք տրվեց վերաբանալ փակած դպրոցները և հետ ստանալ գրաված միջոցները 1905 թ. օգոստոսի 1-ի ուկազով, երբ կառավարությունը պատրաստվում էր կապիտուլյացիայի համառուսական ժողովրդական շարժման առաջ: Սակայն մինչև այդ թվականը շատ տառապանք տեսավ հայ ժողովուրդը, ուստի և անհրաժեշտ է կանգ առնել նաև այդ տառապանքների վրա:

IX.

Դպրոցը հայերի միակ կուլտուրական հաստատությունը չէր: 1864 թ. գոյություն ուներ Բաքվում Հայոց Մարդասիրական ընկերությունը: 1879 թ. հիմնվել էր Հայոց Հրատարակչական ընկերությունը, իսկ 1881 թ. Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը: Թե Մարդասիրական և թե Բարեգործական ընկերությունները առավելապես կուլտուրական-լուսավորական ընկերություններ էին: Նրանք բանում և պահպանում էին դպրոցներ ու գրա-

---

*) Отчеты попечителя Кавк. Учебн. Окр. за 1896 г., стр. 170–171.

դարաններ, թոշակ էին տալիս հայ ուսանողներին, գրքեր էին հրատարակում և վերջապես նյութական օգնություն էին հասցնում չունևոր գրողներին ու գրականագետներին: Բացի այդ նրանք զբաղվում էին բարեգործությամբ, ապրուստի միջոցներ և գործիքներ մատակարարում չունևորներին, ճանապարհածախս վճարում, բնակարան վարձում և այլն: Բաքվի Մարդասիրական ընկերությունը թեև ճյուղեր բանալու իրավունք ուներ, բայց չէր օգտվել այդ իրավունքից, իսկ Կովկասի Բարեգործական ընկերությունը, որի կենտրոնը գտնվում է Թիֆլիսում, բացել էր ճյուղեր շատ ու քիչ հայաշատ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Շուշի, Երևան, Ախալցխա, Գորի, Հին Նախիջևան, Բաթում, Նոր-Բայազետ, Կարս, Ալեքսանդրապոլ, Նուխի, Գանձակ և այլն: 1899 թ. նրա ճյուղերի թիվը հասնում էր 20-ի:

Եվ ահա հենց 1899 թվականին կառավարությունը իր թաթն է դնում այդ ընկերությունների վրա: Նա նախ և առաջ ոչնչացնում է ճյուղեր բանալու իրավունքը, ապա արգելում կուլտուրական-լուսավորական գործունեությունը: Մարդասիրական ընկերությունը, համակերպելով կառավարության պահանջներին, դառնում է մի սոսկ բարեգործական հաստատություն: Նույն ուղին է բռնում և Կովկասի Բարեգործական ընկերությունը: Նրա ճյուղերը բոլորը համարյա թե վերջնականապես փակվում են, որովհետև առանց կենտրոնի աջակցության չէին կարող ինքնուրույն կյանք ունենալ: Մնում է Թիֆլիսի կենտրոնականը, որը դառնում է հայ բարեգործական հաստատություն այդ քաղաքի անունով՝ առանց կուլտուրական-լուսավորական գործունեության իրավունքի: Ի լրումն ամենայնի այդ ընկերությունների գործավարությունն ու գրագրությունը պիտի կատարվեր ռուսերեն, իսկ փակման դեպքում նրանց գույքը պիտի անցներ համապատասխան քաղաքային ինքնավարություններին:

Ծանր էր այդ հարվածը, բայց հայերը լռությամբ ընդունեցին:

Փակման հերթը 1900 թ. հունիսին հասավ Հայոց Հրատարակչական ընկերությանը: Նա իր գոյության ընթացքում հրատարակել էր 187 անուն գիրք, որոնց մեծամասնությունը թարգմանական էին: Իհարկե այդ հրատարակությունները բոլորն էլ անցել էին նախնական գրաքննությամբ և իրանց մեջ ոչ մի վտանգավոր բան չէին պարունակում: Բայց նրանք հրատարակված էին հայերեն, իսկ պայքարը մղվում էր հենց այդ լեզվի դեմ, ուրեմն որքան քիչ գիրք լույս տեսնի տպագրական մամուլի տակից, այնքան լավ: Հրատարակչականը փակվեց առանց իսկ առաջարկ ստանալու փոփոխություններ մտցնելու իր կանոնադրության մեջ:

Մյուս հալածանքները, որոնք վիրավորում էին հայերի կրոնական զգացումները, հետևյալն էին:

1. Ամենայն հայոց կաթողիկոսի առաջադրությունները թեմական իշխանավորներ նշանակելու գործում Կովկասի կառավարչապետի կողմից չէին հասցվում Կայսեր և չէին հարգվում, որով խախտվում էր եկեղեցու նվիրապետությունը և անգիտացվում 1836 թ. մարտի 11-ի օրենքը:

2. Հայոց բարձր հոգևորականության անդամները առանց քննության և դատի ենթարկվում էին վարչական աքսորի:

3. Էջմիածնի Սինոդի դատախազը, դուրս գալով իր իրավասության սահմաններից, միջամտում էր եկեղեցական գործերին:

4. Հայերից պահանջվում էր դատարաններում երդումն ընդունել դատավորների ձեռքով և այն էլ ռուսերեն:

5. Պետական ուսումնարաններում ստիպում էին հայ աշակերտներին կրոնն անցնել ռուսերեն:

6. Հայ եկեղեցու պաշտոնական օրգան «Արարատ» ամսագիրը, որ 1868 թ. հրատարկվում էր առանց գրաքննության, 1897 թ. պետք է ենթարկվեր նախնական գրաքննության:

Այս բոլորը հարկավ գալիս էին ոտնահարելու խղճի և կրոնի ազատության սկզբունքները և ծանր ու ճնշող տպավորություն էին գործում հայերի վրա: Բայց այն, ինչ այդ հալածանքներից հետո տեղի ունեցավ, հայերը չէին կարող երևակայել:

1903 թ. հունիսի 12-ին հրաման դուրս եկավ հարքունիս գրավել հայ եկեղեցու անշարժ կալվածները և դրամագլուխները: Դա արվում էր իբր հօգուտ հայ եկեղեցու: Կիսապաշտոնական հոդվածները, որ հրատարակվում էին պաշտոնական «Кавказ» *թերթում, ճգնում էին ապացուցանել, որ հայ հոգևորականությունը չի կարողանում արդյունավետ կերպով կառավարել հայ եկեղեցու կալվածները, որ նա վատնող է և որ վերջապես իբր թե այդ կալվածներից ստացված եկամուտները ծախսվում են այնպիսի նպատակների վրա, որոնք կապ չունեն կրոնի և եկեղեցու հետ: Սա ակնարկ էր, թե եկեղեցական եկամուտները գործադրվում են հակակառավարական պրոպագանդի վրա: Իհարկե, այս բոլորը ոչ մի կապ չուներ ճշմարտության հետ: Բյուրոկրատիայի համար անտանելի էր այն աննշան ինքնավարությունը, որ ուներ հայ եկեղեցին և որի ծոցում հայ ժողովուրդը ընտելանում էր մի քանի հասարակական գործեր կարգավորել: Նա կամենում էր վերացնել այդ ինքնավարությունը, բռնի միջոցներով ռուսացման քաղաքականություն վարել: Բայց դուրս եկավ, որ սխալ էին նրա հաշիվները:*

1903 թ. հունիսի 12-ի օրենքը ոտքի հանեց ապոլիտիկ հայ ժողովրդական զանգվածը: Ձեռքից խլվում էր նրա դարերով պահպանած ազգային սեփականությունը, մի սեփականություն, որը ճանաչել և անխախտ պահպանել էին պարսից բռնավոր շահերը: Եվ նոր օրենքի գործադրումը հանդիպեց հայերի մասսայական դիմադրության: Դա հրապարակական դիմադրություն էր զենքով և արյունահեղությամբ: Կազմակերպվեց ազգային ինքնապաշտպանության գաղտնի կոմիտե, որ ղեկավարում էր ժողովրդական շարժումը: Թիֆլիսը, Բաքուն, Գանձակը, Կարսը և այլ քաղաքներ տեսան բազմամբոխ դեմոնստրացիաներ և ընդհարումներ ոստիկանության ու զորքի հետ:

Կառավարությունը, չնայած ժողովրդական այդ բուռն բողոքին, գրավեց եկեղեցու կալվածներն ու դրամագլուխները, գրավեց և մոտ երկու տարի կառավարեց իր գործակալների միջոցով, բայց այդ շրջանում էլ նա ուներ հայերի պասսիվ դիմադրությունը: Հայ հոգևորականությունը հրաժարվեց կառավարությունից ստանալ գրաված կալվածների եկամուտները և իր ապրուստը հայթայթեց ժողովրդական հոժարակամ նվիրաբերություններով, իսկ հայ ժողովուրդը իր հերթին չկամեցավ կապալով շահագործելու վերցնել եկեղեցական հողերն ու այլ արդյունատեղիները (угодья) *և նրանք ընկած մնացին առանց մշակման:*

Ահա այսպես պատասխանեց հայ ազգը 1903 թ. հունիսի 12-ի օրենքին: Հիշենք, որ այս շրջանում սկսեցին կազմակերպվել զանազան քաղաքական հոսանքներ, իսկ երկու քաղաքական կուսակցություններ, որոնք մինչև այդ զբաղված էին բացառապես թուրքահայ հարցով, անհրաժեշտ դատեցին գործունեություն սկսել և Ռուսաստանում ու նեցուկ լինել հայ ժողովրդի ինքնապաշտպանության: Այդ կուսակցություններն էին՝ Հնչակյան և Դաշնակցական:

Հայ ժողովրդի խմորվիլը քաղաքական պայքարով և նրա մեջ առաջացած կուսակցությունների գործելակերպը, որը «սպիտակ տերրորին» պատասխանում էր նույնպես տերրորով, հավասարակշռությունից հանեց երկրի կառավարչապետ իշխ. Գոլիցինին և նրա արբանյակներին: Այդ տկարամիտ ադմինիստրատորները հայերին համարյա զրկեցին պետական օրենքների հովանավորությունից, իսկ երբ հասավ ռուսական հիշատակելի 1905 թ. և ենթադրելի համարվեց, որ հայերը չպիտի ձեռնունայն նստեն, նրա վրա քայլեցրին թուրք ժողովրդի տականքները: Թուրքական գրոհը հայերի վրա, որ միանգամայն անսպասելի ծագեց Բաքվում 1905 թ. փետրվարի 6-ին, դժոխքի վերածելով երեք ամբողջ օր մի խոշոր առևտրա-արդյունաբերական քաղաք, ըստ սենատոր Կուզմինսկու զեկուցման հետևյալ ավերածությունը առաջացրեց. սպանվեց 269 մարդ, որոնցից 224 հայ, 41 թուրք և 4 ռուս. վիրավորվեց 220 մարդ, որոնցից 95 հայ, 87 թուրք և ուրիշ ազգերից 38 հոգի: Այս թվերը սեն. Կուզմինսկին անպայման ճիշտ չէ համարում և ենթադրում է, որ շատ սպանվածներ իրանցից թուրքերը ծածկել են: Ապա այդ օրերում այրվել են 4 մեծ տուն, կողոպտվել 176 բնակարան, խանութ և արհեստանոց, որոնցից 134-ը հայի, 34-ը թուրքի և 8 այլ ազգերի:

Բաքվի անակնկալ ընդհարումը բռնկեցրեց Անդրկովկասի մնացած վայրերի թուրքերին և հայերին: Մի տարի և կես շարունակվեց թուրք-հայկական արյունոտ պայքարը: Թիֆլիսը, Շուշին, Գանձակը, Երևանը և Հին Նախիջևանը իրենց գավառներով ասպարեզ դարձան կողոպուտի, սպանությունների, հրդեհների և ավերումների: Հազարավոր կյանքեր խամրեցին: Ամբողջ շուկաներ այրվեցին: Գյուղեր կործանվեցին: Թուրք և հայ ժողովուրդը այդ «պատերազմի» մեջ, պատերազմի, որ տարվում էր կառավարության աչքի առաջ, որը իբրև թե անզոր էր կանգնեցնելու այն, կորցրին միլիոնների ստացվածք և կարողություն: Աղաղակող փաստ է, որ երբ 1905 թ. օգոստոսին երկրորդ անգամ Բաքուն դարձավ թուրք-հայկական ընդհարման թատերաբեմ և երբ թուրքերը այրեցին նավթային հանքերը, կառավարությունը ստիպված էր գանձարանից 20 միլիոնի օժանդակություն տալ նավթարդյունաբերողներին, որ նրանք վերականգնեն իրենց ձեռնարկությունները, այն ինչ դա չէր լինի, եթե սկզբում պետական խելք և կամք լիներ: (Թուրք-հայկական ընդհարումները կարոտություն առաջացրին երկրի հասարակ ժողովրդի մեջ և հայ հասարակությունն ստիպված էր 600 հազարից ավելի դրամ ժողովել և դրանով հաց մատակարարել գյուղացիներին): Ահա այս դժնդակ կացությունն ստեղծեց կառավարական տասնյակ տարիների հալածանքը և այսպիսի «չինարար» կառավարչապետ եղավ Կովկասի համար իշխ. Գոլիցինը: Նա Կովկասը հասցրեց քայքայման դուռը և ինքն էլ տեռորիստի հարվածներից քայքայված հեռացավ այդ երկրից:

1905 թ. գարնանը Կովկասի փոխարքա նշանակվեց կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը: Այս մարդը այլ վարչական ուղի ընտրեց իր համար: Հայերը սրա օրով ընդհանրապես այլևս պետության և օրենքի խորթ որդիք չէին նկատվում, թեև դժվար էր այդ տեսակետին ընտելացնել Կովկասի պաշտոնեությունը, որը տասնյակ տարիներ շնչել էր և գործել հայատեցության շիկացած մթնոլորտում: Վորոնցով-Դաշկովի օրով, 1905 թ. օգոստոսի 1-ին, Բարձրագույն ուկազով վերադարձվեցին հայ եկեղեցական կալվածները: Հայ հոգևորականությունը նորից իրավունք ստացավ զբաղվել կրթական գործով, ուրեմն հայ ժողովուրդը տեր դարձավ եկեղեցական-ծխական դպրոցներին: Ապա հետզհետե հայոց կուլտուրական-լուսավորական հաստատությունները (Մարդասիրական և Կովկասի Բարեգործական ու Հրատարակչական ընկերությունները) կյանքի կանչեցին իրանց հին կանոնադրությունները, ճյուղեր բաց արին և բացի լոկ բարեգործությունից զբաղվեցին նաև կուլտուրական-լուսավորական գործունեությամբ: Ստեղծվեց հասարակական գոյության շատ ու քիչ նորմալ միջավայր: Ինքնապաշտպանությունը, որ կլանում էր ազգի բոլոր ուժերը սկսած 1903 թ., նախ կառավարության ռեպրեսիաների, ապա թուրքական հարձակումների դեմ, տեղի տվեց հասարակական գործի և ըմբռնման շերտավորման: Այդ ուղղությամբ ահագին դեր խաղաց և համառուսական շարժումը 1905 թվականին: Հայության մեջ սկսվեց հայացքների և կարծիքների պայքար: Նրանց լուսաբանմանը կլինի նվիրված հետևյալ գլուխը:

X.

XX դարի սկիզբը հայ հասարակական մտքի զարգացման մեջ նշանավոր պիտի համարել նրանով, որ այդ շրջանից հայ միջավայրում հրապարակ են գալիս անհատ սոցիալ-դեմոկրատներ և սկսում իրանց կրքոտ պրոպագանդը հայերի քաղաքական հետամնացության դեմ, հրավիրելով նրանց հարել համառուսական ընդդիմադիր շարժման և ընդհանուր ուժերով նվաճել «մարդու և քաղաքացու իրավունքները»: Այդ պրոպագանդը հանդիպեց նույնպես կրքոտ դիմադրության: Դիմադրողները, որ գլխավորապես դաշնակցականներ էին, իրենց ղեկավարի բերանով պատասխանում էին. «Դուք խոսում եք «հավելյալ արժեքի» մասին, իսկ մենք «հավելյալ արյան»:

Այս պատկերավոր ոճի միտքը այն էր, որ չնայած ռուս պետության հալածանքներին, հայերը Ռուսաստանում ունեն կյանքի և գույքի ապահովություն, այն ինչ Թուրքիայում վտանգված է նրանց ֆիզիկական գոյությունը: Մյուս կողմից թուրքահայերի կյանքի բարելավումը կախված է եվրոպական պետությունների կոնցերտից և եթե հայերը Ռուսաստանում դեմ գնալու լինեն պետության, ապա չպիտի վայելեն սրա աջակցությունը թուրքահայ դատի համար, այլև պիտի առաջացնեն խիստ թշնամական վերաբերմունք:

Մտածողության այս կապակցությունը շուտով մերժվեց հնչակյան կուսակցությունից, որը մեկն էր թուրքահայ դատով զբաղվող կազմակերպություններից: Այս կազմակերպության արտասահմանյան մամուլը («Հնչակ» և «Վերածնունդ») սկսեց արծարծել այն միտքը, թե թուրքահայերի ազատագրումը խոշոր կապ ունի ռուս ժողովրդի ազատագրության հետ, որ Եվրոպան սարսափի մեջ է ռուսական աբսոլյուտիզմից, որ վերջինիս չքացումը լայն ուղի

կբանա բոլոր երկրների քաղաքական և սոցիալական զարգացման համար: Սակայն հայ ժողովրդական մասսաները անտարբեր էին սոց.-դեմոկրատների և հնչակյանների պրոպագանդին: Նրանց հանդես բերած գաղափարները դժվարությամբ էին ըմբռնվում և պահանջում էին ավելի բարձր կուլտուրական զարգացում, քան ուներ հայ ժողովուրդը:

1903 թ. հունիսի 12-ի օրենքը միանգամից տասնյակ տարիների խաղաղ պրոպագանդի գործ կատարեց: Ժողովրդական մասսաները ծառացած էին այլևս և այժմ հեշտությամբ էին ընդունում հակակառավարական լոզունգը: Դաշնակցական դիվանագիտության սիրահար ինտելիգենցիան սկսեց տատանվել իր սկզբունքների մեջ և որպեսզի չզրկվի ժողովրդական համակրանքից, լույս աշխարհ հանեց իր՝ Ռուսաստանի գործունեության ծրագիրը: Դաշնակցականները այսպիսով միմիայն իրերի թելադրանքով հարեցին ընդհանուր շարժման: Նրանք այլևս բարիք չէին սպասում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունից: Դա մտքի մի խոշոր տեղաշարժություն էր, որ կատարվեց նրանց մեջ, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ հայ ժողովրդական շարժումը առանձնապես քաղաքներում շուտով ստացավ սոցիալական բնույթ և իր կազմով սկսեց հարվածել հայ բուրժուազիային և ճեղք բանալ ազգային միության (ավելի ճիշտ ասած՝ ազգային խոնարհության) մեջ, մի բան, որ ցանկալի չէր դաշնակցականների աչքում, քանի որ դասակարգային հակամարտությունը սպառնում էր փակել նրանց նյութական աղբյուրը:

1904 թ. հիմնվեց Հայ Սոց.-Դեմ. բանվորական կազմակերպությունը, որի հիմնադիրները հանդիսացան Դաշնակցությունից անջատված մտավորականներ և մինչև այդ հայության մեջ գործող անհատ սոցիալ-դեմոկրատներ:

Այժմ ինքնին հարց է ծագում, թե այդ քաղաքական հոսանքները որպիսի՞ ազգային իդեալ առաջադրեցին իրանց հետևողներին, կամ ին՞չ բովանդակություն դրին «Հայերը Ռուսաստանում» հասկացողության մեջ:

Հնչակյանների նկատմամբ պիտի ասենք, որ նրանք հենց սկզբից թույլ կազմակերպություն ունեին և նոր ուժ չստացան, առաջինը ընդգրկելով իբրև կազմակերպություն ռուսահայերին քաղաքական պայքարի կոչելու լոզունգը: Նրանք տատանվում էին սոցիալ-դեմոկրատական և ազգային-դեմոկրատական հոսանքի մեջ: 1905 թ. նրանց մի մասը հեռացավ կազմակերպությունից և միացավ սոցիալ-դեմոկրատներին: Մյուս աննշան մասը ընդունելով սոցիալ-դեմոկրատ հորջորջումը, բայց աղոտ հասկացողություններ ունենալով այդ վարդապետության մասին, մնաց իբրև պոչ արտասահմանում (գլխավորապես Թուրքիայում) գոյություն ունեցող հնչակյանների և առանձնապես նկատելի տեղ չբռնեց հայ կյանքի մեջ: Համենայն դեպս հնչակյանների խումբը անջատողական կամ մի ուրիշ որոշակի ազգային իդեալ չի առաջադրում: Նա ինքը գաղափարական որոշություն չի ներկայացնում:

Դաշնակցականները, անհրաժեշտ դատելով քաղաքական պայքարի դիմել Ռուսաստանում, հարեցին ռուս սոցիալիստ-հեղափոխականների ծրագրին: Նրանց ծրագրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պահանջում են քաղաքական ֆեդերացիա Անդրկովկասի համար: Նկատի առեք՝ Անդրկովկասի, այլ ոչ հայերի: Սա նշանակում է վարել ծայրագավառի քաղաքականություն, այլ ոչ ազգային:

Հայ սոց.-դեմ. բան. կազմակերպության ծրագիրը նույնն էր, ինչ Ռուսաստանի Ս. Դ. բ. կուսակցությանը, բայց մի տարբերությամբ: Հայ սոց.-դեմոկրատները հրաժարվում էին ընդունել Ռ. Ս. Դ. բ. կուսակցության ծրագրի «ազգային ինքնորոշում» (самоопределение) *պահանջը**): *Այդ պահանջը իր տրամաբանական զարգացման մեջ նշանակում է քաղաքական անջատում, որը հայ մարքսիստների համար անընդունելի է և անգամ համարվում է իբրև վնասակար գաղափար:*

Հարկավ, այս հոսանքներով չեն սպառվում հայ հասարակական մտքի երանգավորումները: Դուրսը մնում է ինտելիգենցիայի մի խոշոր բազմություն, որը անցյալում իր ուսերի վրա է տարել հայերի կուլտուրական-լուսավորական զարգացումը և այժմ էլ անձնվիրաբար գործում է այդ ասպարեզում: Այդ ինտելիգենցիայի հասարակական դավանանքը կարելի է որակել իբրև լիբերալ-նարոդնիկություն (либеральное народничество)*: Լիբերալիզմ և ժողովրդասիրություն՝ այս գծովն է գնում հիշյալ ինտելիգենցիան, որը կրթվել է Գր. Արծրունու (վախճ. 1892 թ.) սկզբունքներով:*

Այդ ինտելիգենցիան արտահայտիչն է հայերի չափավոր մտածողության: Նա ռուս սահմ.-ռամկավարների քաղաքական և հասարակական դավանանքի թարգմանն է հայերի մեջ: Եվ նրա բերանը կարելի է համարել «Մշակ» թերթը:

1905 թ. հիշյալ ինտելիգենցիայի ջանքերով համառուսական հանրագրությունների շրջանում հայերն էլ հայտնեցին իրենց ցանկությունները մինիստրների խորհրդին: Այստեղ առաջ ենք բերում հայերի հանրագրությունը ամբողջովին, որ հայության խոշորագույն մասի քաղաքական և հասարակական դավանանքի թարգմանն է.

«1. Հայ ազգաբնակչության մասնակցությունը Կովկասի մյուս ժողովուրդների հետ համահավասար համառուսական ներկայացուցչության մեջ: Հայ ազգաբնակչության իրավունք է տրվում մասնակցելու այն քննություններին, որոնք նպատակ ունեն նպաստել պետական կարգերի կատարելագործմանը Ռուսաստանում, և դա այն ձևով ու հիմունքներով, որով այդ մասնակցությունը ապահովված կլինի կենտրոնական նահանգների բնակչության համար:

2. Կազմակերպումն Կովկասի ինքնավարության, որին հավասար իրավունքներով կմասնակցեն Կովկասում բնակվող բոլոր ժողովուրդները:

Անկախ սրանից անհրաժեշտ է առանց հետաձգման Կովկասում մուծել հետևյալ բարենորոգումները:

1. Համադասային զեմստվոյական հաստատություններ և փոփոխումն քաղաքային կանոնադրության լիակատար ինքնավարության հիմունքներով:

2. Մուծումն երդվյալների դատարանի, ընտրովի հաշտարար դատավորների և կիրառումն տեղական լեզուների հաշտարար դատաստանական հաստատություններում: Հայ գերակշռող բնակչություն ունեցող շրջաններում դատավորները պարտավոր են իմանալ հայ լեզուն:

3. Հայ գյուղացիների հողաբաժինների պարտադիր ետ-գնումն կառավարության աջակցությամբ այն ընդհանուր հիմունքներով, որ գործադրվել է ներքին նահանգներում:

---

*) *«Կեանք», 1906, № 15:*

4. Նախընտրական իրավունք արքունի ազատ հողերի վրա վերաբնակվելու տեղական սակավահող և հողազուրկ գյուղացիների համար: Լիակատար վերացումն այն կարգի, որով տեղական գյուղացիների հողաբաժիններից զատվում են հողամասեր եկվոր բնակչության համար:

5. Հանուն ժողովրդական կրթության լայն իրագործման՝ դպրոցների և կրթական հաստատությունների բացման կատարյալ ազատություն հասարակական և մասնավոր ձեռներեցությամբ և հայերեն դասավանդումով: Բարձրագույն կրթական հաստատության բացումն Անդրկովկասում, առավելություն տալով արևելյան բաժանմունք ունեցող համալսարանին:

6. Պարտադիր ուսուցումն տարրական դպրոցներում մայրենի լեզվով: Հայոց լեզուն և կրոնը արքունի միջնակարգ դպոցներում հայերի համար դասվում են պարտադիր առարկաների շարքը:

7. Ազատություն ժողովների, հավաքումների, ընկերակցությունների և միությունների: Լեզվի ազատություն ժողովների մեջ: Տեղական մամուլի ազատությունը գրաքննությունից և նրա պատասխանատվությունը դատարանի առջև:

8. Իրավունք սոսկ հայտարարությամբ բանալու տարրական և միջնակարգ դպրոցներ, հրատարակչական, բարեգործական, լուսավորական և այլ հաստատություններ ու հիմնելու պարբերական հրատարակություններ:

9. Վերացումն բոլոր դավանական ու կրոնական սահմանափակումների:

10. Վերահաստատումն հայ եկեղեցու իրավունքների և արտոնությունների նրա կանոնների և հնագույն կարգերի համեմատ, ինչպես և վերաբացումն փակված եկեղեցական-ծխական ու թեմական դպրոցների:

11. Վերադարձնումն հայ եկեղեցու այն գույքերի, որոնք պատկանում են եկեղեցիներին, վանքերին և նախկին եկեղեցական-ծխական ու թեմական դպրոցներին՝ թե գոյություն ունեցող և թե փակված:

12. Հայերը զինվորական ծառայությունը կատարում են Կովկասի սահմաններում:

13. Ներումն այն բոլոր հայերին, որոնք քաղաքական և կրոնական համոզմունքների համար դատապարտված են կամ աքսորված վարչական կարգով:

14. Վերացումն Կովկասում գոյություն ունեցող զեմստվոյական պահակների:

15. Վերացումն Կովկասում տիրող ուժեղացրած պահպանության և ռազմական դրության»:

Այս վավերագիրը ցույց է տալիս, թե որքան չափավոր են հայերի ձգտումները: Մի իրավական պետության մեջ այդ պահանջների մեծագույն մասը ինքնին կարող է բավարարված լինել: Մյուս կողմից տեսնում ենք, որ հայերի զուտ ազգային պահանջները հոգևոր-կուլտուրական բնույթ ունեն: Միակ տերիտորյալ քաղաքական պահանջը կազմում է հանրագրության երկրորդ կետը՝ ինքնավարության կազմակերպումն Կովկասում, բայց դա էլ ծայրագավառի պահանջ է, ինչպես որ այդպիսին էր դաշնակցականների առաջադրած դեմոկրատական ֆեդերացիան:

Ավելացնենք, որ հայկական այս միջին չափավոր հոսանքից բացի կան նաև առանձին աշխարհիկ մտածողներ (Ս. Սպանդարյան և այլն), ինչպես նաև հայ հոգևորականությունը, որոնք հայ եկեղեցու ինքնավարական օրենքը

(1836 թ. մարտի 11-ի) պակասավոր համարելով հանդերձ, չեն գտնում ուղղելի կամ քննելի Պետական Դումայի, առհասարակ Ռուսաստանի օրենսդրական հաստատությունների կողմից: Այդ օրենքը, ասում են նրանք, շնորհված է ռուսաց կայսրից, ինչպես Ֆինլանդիային շնորհված է հատուկ ինքնավարություն, ուստի և նրա գոյությունը պայմանավորված է կայսրի և հայ եկեղեցու փոխադարձ համաձայնությամբ: Ուրիշ իշխանություններ իրավունք չունեն ձեռնամուխ լինելու այդ օրենքին: Նրա մեջ որևէ բան փոխելի է միայն հայ եկեղեցու համաձայնությամբ:

Ահա Ռուսաստանի հայերի զանազան հոսանքների քաղաքական և հասարարական դավանանքները: Քաղաքական ուրույն գոյության պահանջ չկա նրանց մեջ: Չկա և տերիտորիալ ազգային ավտոնոմիայի կամ ֆեդերացիայի պահանջ: Ինչպես Ս. Նազարյանն է ասել 50 տարի առաջ, «հայը քաղաքականապես ռուս է և ունի այն շահն ու վնասը, ինչ տերությունն ունի»: Կարծում ենք, որ մեր այս հոդվածից պարզ պիտի լինի, թե ինչու է հայը «քաղաքականապես ռուս»: Այն պատմական անցյալը, որ նա է ունեցել, ստիպել է նրան Ռուսաստանի սահմաններում փնտրել կյանքի և գույքի ապահովություն: Բայց այդ պատմական անցյալը այսօր թարմ իրականություն է արտասահմանյան հայերի համար: Ո՞ր խելագար ռուսահայը կարող է Պարսկաստանի և Թուրքիայի պետական սահմաններում փնտրել ազգային ուրույն ստորադաս քաղաքական գոյությունը: Ռուսահայը իր երկրի ապահովությունն և կարգ ու կանոնը, որքան էլ նրանք թերի լինեն, չի կարող փոխել Թուրքիայի «ազատության» հետ: Նա տնտեսապես և կուլտուրապես շատ է հեռացել Թուրքիայից և կապվել Ռուսաստանի հետ:

Մյուս կողմից հայությունը քաղաքական ուրույն ստորադաս գոյության գաղափար չի գուրգուրում Ռուսաստանում այն պատճառով, որ իր դարավոր և պատմական ծննդավայրում նա թույլ է քանակով: Երևանի նահանգը, որ նրա անցյալ քաղաքական անկախության շրջանում կազմել է պետության սիրտը, այժմ (1908 թ. հաշվով) ունի 512,183 հայ բնակիչ, կամ ամբողջ բնակչության 57,4%: Եթե Անդրկովկասում Երևանի, Գանձակի, Թիֆլիսի և Կարսի նահանգների որոշ մասերից (դուրս ձգելով ուրիշ ազգագրական մեծամասնություն ունեցող գավառները) հայկական տերիտորիա կազմելու ցանկություն ունենանք, ապա այդ տերիտորիայից դուրս պիտի մնան 300 հազարից ավելի հայեր կամ հայության 25%: Եվ հետո տերիտորյալ ինքնավարություն ունեցող հայությունը պիտի մնա կառչած անբերրի լեռների ու սարահարթերի, գուրկ ճանապարհներից և այնպիսի կենտրոններից, ինչպիսիք են Թիֆլիսն ու Բաքուն):*

Ահա այս բոլոր պատճառներով տերիտորիալիզմը գրավչություն չունի հայերի մեջ և այսօր չի համապատասխանում նրանց գիտակցված շահերին: Կան հայ մտածողներ, որոնք ազգային հարցի լուծումը Ռուսաստանում չեն կապում երկրի դեմոկրատիզացիայի հետ, թեև դա համարում են նախապայմաններից մեկը: Նման մտածողները, ավելի շատ մարքսիստական բանակից, առաջադրում են ազգային կուլտուրական ավտոնոմիայի պահանջը: Սակայն

---

*) «Նոր Հոսանք», 1913, № 1–2. մեր հոդվածը՝ «Ազգային հարցը և դեմոկրատիան»:

նույնիսկ այդ պահանջը ընդհանրացած չէ հայերի մեջ, թեև նրանք միշտ պայքարել են ու նեղվել հանուն կուլտուրայի: Ապագան ցույց կտա, թե որքան հաջող պահանջ է ազգային կուլտուրական-ավտոնոմիան: Համենայն դեպս նա մեզ թվում է հայության տենչերի միակ արտահայտիչը, նրանց կացության համապատասխան քաղաքական դավանանքը:

Երկու խոսք ևս: Ռուսահայերի հասարակական ֆիզիոնոմիան միակողմանի կլինի, եթե մենք չխոսենք նաև այն դերի մասին, որ նրանք կատարել են թուրքահայերի դատի նկատմամբ: Այդ կանենք ներկա հոդվածի հետագա և վերջին գլխում:

XI.

Տեսանք արդեն, որ ռուսահայերը, «քաղաքականապես ռուս» լինելով, իրանց մտահոգություններն ու ջանքերը կենտրոնացրել էին ազգային հոգևոր-կուլտուրական բարեմասնությունների զարգացման ու պաշտպանման վրա: Բայց նրանց պաշտպանության գենքը թույլ էր, բացառապես բարոյական և կախված հասարակական գիտակցությունից, այն ինչ հզորապես պաշտպանված է լինում հոգևոր կուլտուրան քաղաքական հարկադրող ուժի ներկայությամբ և աջակցությամբ: Հայերը տեսնում էին, որ իրանք այդ ուժը չունեն, որ «քաղաքական անոթը», ինչպես արտահայտվում էր Ս. Նազարյանը, վերացել է ազգից և երբեք չի կարող ստեղծվել Ռուսաստանի սահմաններում: Իսկ եթե Ռուսաստանում անկարելի է «քաղաքական անոթի» տեր լինել, գուցե դա հնարավոր է մի այլ հորիզոնի տակ: Հայերը այդ թույլատրելի համարելով, իրանց աչքերը դարձնում էին դեպի Թուրքիա, մի երկիր, որի սահմաններում բուսել էին անկախ Հունաստան, Սերբիա, Ռումանիա և այլն: Այս մտայնությունը ռուսահայերի մեջ սկսեց զարկ ստանալ մանավանդ 1877–78 ռուս-թուրքական պատերազմից հետո: Թուրքահայաստանի ապագայի նկատմամբ ռուսահայերի մեջ սկսեց բողբոջել մի տեսակ քաղաքական միստիկիզմ: Այդ երկրամասը պիտի հայ-հայրենիքը դառնար: Նա պիտի հովանավորություն տար հայ մտավորականին, որի միտքը ազատորեն արտահայտվելու վայր չէր գտնում: Նա պիտի ապաստարան լիներ սակավահող հայ գյուղացու համար, պիտի պաշտպաներ հայ քաղքենու առևտուրն ու արհեստը: Եվ ռուսահայերի համար թուրքահայերի ազատագրությունը դարձավ ժողովրդական շարժում: Խոսվում էր նրանց տառապանքների անունից, խոսվում էր հանուն եղբայրական սիրո և աջակցության, բայց յուրաքանչյուր այդպես խոսող ռուսահայ իր սրտի խորքում գուրգուրում էր այն հավատը, թե ազատագրված Թուրքահայաստանը խորթ անկյուն չի լինի և իր համար, որ այնտեղ անարգել կբարգավաճե հայ խոսքը, հայ կուլտուրան, որ ծանր ժամին դեպի նրա սահմանները կուղղե իր քայլերը հալածական հայը:

Սակայն ինչպես էին մտածում իրանց ճակատագրի մասին բուն թուրքահայերը: Նրանք 1863 թ. ստացել էին իրանց «Ազգային Սահմանադրությունը», մի պետական ակտ, որ շնորհում էր հայերին ազգային-կուլտուրական ավտոնոմիա, թեև առանց հարկադրական ազգային տուրքի գանձման իրավունքի և առանց պետական բյուջեից որոշած նպաստի: Թուրքահայերի մտածող դասը մեծ հույսեր էր դնում «Ազգային Սահմանադրության» վրա և են-

թարկված լինելով արևմտաեվրոպական քաղաքական ազդեցության (Ֆրանսիայի և Անգլիայի), սպասում էր, որ Թուրքիան պիտի վերածնվի և եվրոպականանա, որով և հայերի համար հնարավորություն պիտի ստեղծվի ապահով կյանք և տնտեսական բարգավաճում ունենալու, իսկ նրանց հոգևոր-կուլտուրական բարգավաճումը արդեն ապահովվում էր «Ազգային Սահմանադրության» գոյությամբ: Այս մտայնությունը հայերի մտածող դասին և հոգևորականությանը հեռու էր պահում ռուսական քաղաքականությունից: Ռուսական ներքին ռեժիմը և հայերի կուլտուրական ձգտումների դեմ գործադրած արգելքները հրապուրանք չէր ներշնչում դեպի Ռուսաստանը: Ինքը՝ Թուրք կառավարությունը, մանավանդ այդ կառավարության կրթված ներկայացուցիչները, աշխատում էին հայերին հեռու պահել Ռուսաստանի ազդեցությունից: Ահա ինչ է գրում 1869 թ. թուրք հայտնի պետական գործիչ և ռեֆորմատոր Ֆուադ փաշան իր քաղաքական կտակի մեջ. «Բ. Դուռը երբեք չպետք է թույլ տա այնպիսի ինտրիգներ, որոնց նպատակն է միություն հաստատել հայերի և ուղղափառ եկեղեցու մեջ»: Ռուսաստանը ըստ Ֆուադի Թուրքիայի ավանդական թշնամին է. պետք է նրա դեմ լինել, միշտ դաշնակից մնալով Անգլիային: Անուշադրության մատնելով Թուրքիայի հպատակների բարոյական դավանանքի (կրոնի) խնդիրը, Ֆուադը խորհուրդ է տալիս խիստ ուշադիր լինել դեպի նրանց քաղաքական դավանանքը և խստապահանջ լինել, եթե նա դեմ է գնում թուրք պետության ամբողջականության: Բայց քաղաքական ռեպրեսիաներով չի կարելի թուրք պետականության կողմնակից դարձնել ոչ-թուրքերին, ուստի և նա խորհուրդ է տալիս իրականացնել քաղաքացիական և քաղաքական իրավունքների հավասարության սկզբունքը: «Այդտեղ ահա, – շարունակում է Ֆուադը, – սկսվում են մեզ համար բավական լուրջ դժվարություններ: Մեր քրիստոնյաները, ազատվելով այն լծից, որ նրանց հնազանդության մեջ էր պահում, չափից դուրս շտապում են իրանց նախկին տերերի տեղը բռնել: Մանավանդ հայերը այդ կողմից չափազանց ձգտում են ցույց տալիս: Արդար կլիներ չափավորել նրանց եռանդը, բանալով պետական ծառայության ասպարեզը միայն նրանց առաջ, որոնք անկեղծ կերպով կընդունեն մեր կայսրության միացնող սկզբունքները»):*

Այս դատողությունները հետևողական իրավահավասարության մասին չեն խոսում, բայց նրանք բնորոշ են այն կողմով, որ Թուրքիայի հեռատես պետական գործիչները զգում էին, որ իրանց հայրենիքի անկախ հարատևությունը կապված է եվրոպականացման և ժողովուրդների հավասար կացության հետ: Այս նույն միտքն էր ոգևորում ժամանակի ազդեցիկ թուրքահայերին, որոնք սպասում էին, թե Թուրքիան պիտի մի նոր Ավստրիա-Հունգարիա դառնա: Եվ խիստ բնորոշ է, որ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, 1876 թ. հուլիսի 6-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հրատարակում է մի կոչ, որի մեջ ասված է. «Ստույգ է թեև, որ Հայ ազգը մերթ ընդ մերթ գավառներու մեջ բարեխնամ Տերության կամաց հակառակ հարստահարությանց ենթակա եղած ալ է, հարստահարությունք՝ որոնք միայն մարմինը կվնասեն, և հեռի են այն տեսակ հարստահարություններեն՝ որոնք ոգին և մարմինը միանգամայն կվնասեն և ազգին գոյությանը կսպառնան»:

---

*) «Մշակ», 1896, № 143. «Ֆուադ փաշայի կտակը»:

Պետք է ուրեմն օժանդակել Թուրքիային: «Այս օժանդակությունն ընելով հայրենասեր Հայը, նույնիսկ յուր ազգային շահը պաշտպանած կլա. վասն զի Օսմանյան երկիրը պաշտպանել՝ Հայաստան պաշտպանել ըսել է. նույնիսկ Հայուն Կրոնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիվն ու կյանքը պաշտպանել ըսել է»: Սակայն Թուրքիայի գավառական կացությունը այնպես չէր, որ այս խոսքերը պարարտ հող գտնեին: Ազգի ղեկավարները կարող էին գեղեցիկ ծրագիրներ որոճալ, բայց գավառացի հայը շտապում էր ռուս զորքերին ընդունել իբրև փրկիչների: Ազգի գլուխն ու մարմինը իրար ներդաշնակ չէին:*

Թուրքիան 1877–1878 թթ. պատերազմում պարտվեց և հայերը բռնեցին Ռուսաստանի փեշը, որ սա ազատություն շնորհե և իրանց: Այս քաղաքականության հիմքը դրին ռուսահայերը, որոնք գլուխ ունենալով Գր. Արծրունուն, 1876 թ. մի ուղերձ մատուցին Կովկասի փոխարքա Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչին, խնդրելով նրան, որ անուշադրության չմատնվի Թուրքահայերի ծանր կացությունը: Պատերազմից հետո՝ հաշտության դաշնագրի կնքման շրջանում հրապարակ եկան և Թուրքահայերը, գլուխ ունենալով վերը հիշած կոչի հեղինակ Ներսես պատրիարքին: Թուրքահայերի դիմումը Ռուսաստանին այն հետևանքն ունեցավ, որ 1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյի անունով հայտնի դաշնագրի մեջ հատուկ հոդված մտցրվեց հօգուտ հայերի: Այդ հոդվածը, ըստ կարգի 16-րդ, ունի հետևյալ բովանդակությունը. «Նկատելով որ ռուսաց զորաց Հայաստանի մեջ գրված, բայց Թուրքիո վերադարձվելիք տեղերեն մեկնելը կրնա կռիվներու և եկու տերությանց բարեկամական հարաբերություններուն վնաս բերող կնճիռներու ծնունդ տալ, Բ. Դուռը պարտավորություն հանձն կառնու Հայոց բնակած գավառներու մեջ տեղական պիտոյից պահանջած բարվոքումներն ու բարենորոգումներն առանց այլևս հապաղելու գործադրել, և քուրդերուն ու չերքեզներուն դեմ անոնց ապահովությունն երաշխավորել»: Սա հայանպաստ հոդվածի պաշտոնական խմբագրությունն է: Ինքը, արևելյան հարցի մեջ ահագին դեր խաղացած կոմս Ն. Պ. Իգնատիևը, հետևյալ բացատրությունն է տալիս այդ հոդվածի առիթով կանցլեր իշխ. Գորչակովին. «Հոդված XVI. կատարյալ բավարարություն պատճառեց այս հոդվածը հայերի ընդհանուր ցանկության: Առաջին անգամ Հայաստանի անունը արտասանված է միջազգային պայմանագրում, և այն պարտավորությունները, որ հանձն է առել Բ. Դուռը, կարող են հիմունք ծառայել, որ մենք մեր խնամակալության տակ առնենք Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակչության մեծագույն մասը: Այդ հոդվածը կապացուցանե Եվրոպային, որ Ռուսաստանը բացառապես պլավոններին և իր դավանակիցների մասին չէ հոգում, այլ որ նա, դրդված մարդասիրությունից, նկատի է ունեցել ապահովել Թուրքիայի ողջ քրիստոնյա ազգաբնակչության բարօրությունը: Որովհետև թուրք լիազորները համառ ու ջերմ ծառանում էին մեր առաջարկի դեմ՝ հիշել Էջմիածնի կաթողիկոսի անունը և անվանել նրան ծայրագույն գլուխ բոլոր հայերի, ապա ռուս լիազորները ավելի զգույշ դատեցին չպնդել դրա վրա: Իսկապես միջազգային ավելի մեծ նշանակություն տալը կաթողիկոսին կարող է հենց մեզ համար որոշ վարչական դժվարություններ ստեղծել Կովկասում և

* *«Մշակ», 1876, № 33:*

նույնիսկ հայերի մեջ պահպանել ցանկություններ և ձգտումներ, որ համապատասխան չեն մեր շահերին»[*]:*

Կոմս Իգնատիևի այս բացատրությունը ի միջի այլոց ցույց է տալիս, որ հայերի նկատմամբ ներդաշնակություն չի եղել Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունների մեջ: Ռուսաստանի օգուտը պահանջում էր Արևելքում օգտագործել կաթողիկոսական ինստիտուտը, ուրեմն և զորացնել նրա միջազգային հեղինակությունը, բայց դա կարող էր դառնալ երկսայրի սուր *Կովկասի սահմաններում, ուստի և ռուս կառավարությունը հետևողական քաղաքականություն չէր վարում, որով և հայերին միշտ պահում էր տարակուսանքի մեջ: Դիմելով նորից Սան-Ստեֆ. դաշն. 16-րդ հոդվածին, պիտի ասենք, որ նրա զորությամբ հայերի խնամակալը միմիայն Ռուսաստանն էր դառնում, սակայն այդ հոդվածը փոփոխության ենթարկվեց Բեռլինի վեհաժողովում և ըստ կարգի դառնալով 61-րդը, հետևյալ բովանդակությունն ընդունեց. «Բարձրագույն Դուռը կխոստանա առանց այլևս հապաղելու գործադրել այն բարվոքումներն ու բարենորոգումները, զոր տեղական պետքերը կպահանջեն Հայոց բնակած գավառներուն մեջ և անոնց ապահովություն երաշխավորել չերքեզաց ու քրդաց դեմ: Այս նպատակավ ձեռք առնված միջոցները պարբերաբար պիտի ծանուցանե տերությանց, որք անոնց գործադրությանը պիտի հսկեն»: Ահա այսպիսով հայերն ստացան վեց մեծ պետությունների խնամակալությունը, որը իրական շահ չբերեց նրանց, այլ միայն մի ավելորդ միջոց տվավ պետություններին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և հայերի հաշվին ամրապնդելու իրանց դիրքը այդ երկրում: Եթե 61-րդ հոդվածը իրական օգուտ չբերեց հայերին, սակայն պատճառ դարձավ, որ եռանդով բանե նրանց քաղաքական միտքը և կորով ներշնչե մի ստրկացած ժողովրդի: 61-րդ հոդվածը քաղաքական շավղի վրա դրեց ոչ միայն թուրքահայերի մտածողությունը, այլև գուցե ավելի շատ ռուսահայերի: Վերջիններս չափավոր հասարակական դավանանք ունենալով Ռուսաստանում, սկսեցին խիզախ քաղաքական դատ վարել Թուրքիայում: Ապոլիտիկ լինելով Ռուսաստանում, նրանք քաղաքականության երկրպագուներ էին Թուրքիայի նկատմամբ: Եվ ի՞նչ էր նրանց քաղաքականության էությունը, ինչպես էր նրանց գործելակերպը:*

Մտավորականներ մատակարարել թուրքահայերին, որ ազատության քարոզ կարդան նրանց, կազմակերպեն նրանց այդ գաղափարի անունով: Զենք և նյութական միջոցներ մատակարարել թուրքահայերին, որ զորավոր լինի նրանց դիմադրական կորովը: Զինված խմբեր անցկացնել Թուրքիա, որ խրախուսեն հայերին, իրանց օրինակով վարակեն նրանց և պատժող բազուկ դառնան հայ ժողովրդի հարստահարիչների համար: Ապա գրավոր և բանավոր պրոպագանդ տանել Եվրոպայում, որ քաղաքակիրթ աշխարհը հետաքրքրվի հայերի կացությամբ և ստիպե դիպլոմատիային իրագործել իր բեռլինյան խոստումը: Սրա մեջ էր արտահայտվում հայերի քաղաքական գործունեությունը: Եվ այդ գործունեության վարիչներն էին երկու կազմակերպություն. Հնչակյան կուսակցություն, որ հիմնվել էր 1887 թ. և Դաշնակցություն, որ երևան էր եկել 1890 թ.: Այդ կազմակերպությունների կատարած գործը

---

[*] «Исторический Вестник», 1915, CX II, стр. 85.

միևնույն բովանդակությունն ուներ, չնայած որ առաջինի ծրագիրը մարքսիստական ֆրազեոլոգիայի մեծ դոզա էր պարունակում, իսկ վերջինի ծրագիրը պարզ հեղափոխական դեմոկրատիզմ:

Հայ ժողովուրդը չէր խնայում իր աջակցությունը այդ կազմակերպություններին, բայց և դրա համար իր թիկունքին էր առնում ռուս կառավարության հարվածները: Մի երկու պատկերացում, թե ինչպես էր Թուրքիայի շահերը իր սրտին մոտ ընդունում ռուս բյուրոկրատիան: 1890 թ. սեպտեմբերին 120 հոգով փորձեց Թուրքիա անցնել Ս. Կուկունյանը, սակայն նա իր ընկերներով շրջապատվեց Կաղզվանի մոտ ռուս զորքերով և ստիպված եղավ խմբի մի մասի հետ անձնատուր լինել առանց դիմադրության: 35 հոգի դատի տրվեցին, որոնցից 9 հոգի արդարացան, իսկ 26-ը դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի: Ինքը Ս. Կուկունյանը դատապարտվեց 20 տարով, 20 հոգի խմբից՝ յուրաքանչյուրը 15 տարով, 1 հոգի 12 տարով, իսկ 4-ը՝ 8 տարով յուրաքանչյուրը: Դատարանը հրաժարվեց Կուկունյանի ձեռնարկը համարել քաղաքական գործ, այլ դեպքի վրա նայեց իբրև քրեական հանցանքի վրա:

14 տարի հետո ավելի դժբախտ հետևանք ունեցավ մի ուրիշ հայրենասերի ձեռնարկ: Մենք ակնարկում ենք Թուման Թումյանի ողբերգական վախճանը: Այդ մարդը իր խմբով շրջապատվեց Օլթիի շրջանում ռուս սահմանապահ զորքերով և նրանց գլխավոր Բրկովի հրամանով բոլորը անխնա կոտորվեցին: Զորս տասնյակ սպանված տվեց հայերի խումբը առանց մի գնդակ արձակելու ռուս զորքի դեմ, որովհետև դա կուսակցական հինավուրց դավանանք էր, որ հայերը կռիվ չեն վարում Ռուսաստանի դեմ, ուստի և դիմադրության փորձ չպիտի լինի:

Վերջապես մի՞թե այսօր ամեն ոք չգիտե, որ 1895–1896 թթ. հայերի սարսափելի կոտորածների ժամանակ ռուսական արտաքին գործերի մինիստր իշխ. Լոբանով-Ռոստովսկին ինքնագոհ խմաստություն էր ունեցել ասելու, թե Հայաստանը Ռուսաստանին հարկավոր է առանց հայերի ...

Այսպես դատեց և գործեց ռուս բյուրոկրատիան, քանի նրա աչքերը հառած էին Մանջուրիային և Հեռավոր Արևելքին: Ռուս-ճապոնական պատերազմը և Ռուսաստանի պարտությունը բեկումն առաջացրին այս քաղաքականության մեջ:

Ռուսաստանը նորից սկսեց տենդորեն զբաղվել Մերձավոր Արևելքի խնդիրներով և հայերը նորից քաղաքական կարևորություն ստացան նրա աչքում: Նա առաջ մղեց Հայաստանի բարենորոգումների հարցը, բայց այստեղ տեսավ, որ իր անփութության տարիներում Թուրքիայում ամուր բազմել է մի ուրիշ ուժ, Գերմանիան, որը կամք չէր ցույց տալիս անօգնական թողնել Թուրքիային: Ռուսաստանը ստիպված եղավ զիջող և անպահանջկոտ լինել: Հայաստանի բարենորոգումների հարցը փակվեց 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրությամբ), որ եվրոպական ինսպեկտորներ էր տալիս այդ երկրի երկու շրջաններին: Այդ ինսպեկտորները օժտված էին որոշ վարչական իրավունքներով և պետք է քաղաքացիական տանելի կյանք հաստատեին երկրի մեջ, սակայն ծագեց եվրոպական պատերազմը և Թուրքիան չտապեց իրան ազատ հռչակել իր վրա վերցրած պարտավորութ-*

*) *Տե՛ս ռուսական* «Оранжевая книга».

յուններից և Եվրոպա ճամփել հրավիրված ինսպեկտորներին: Թուրքիան ինքը խառնվեց եվրոպական պատերազմին և հիմա հայերը հույս են կապել, որ Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթությունը կլուծե Հայաստանի հարցը, որոշ «քաղաքական անոթ» պարգևելով այդ երկրին և նրա ժողովրդին: Այս հուսացումը դրդել է հայերին խոշոր զոհաբերություններ անել և իրանց բախտը կապել Ռուսաստանի հետ: Բայց հայերի այդ քաղաքականությունը իր հերթին արձակել է թուրքերի ձեռքը և նրանք այսօր զբաղված են հայերի բնաջնջման գործով ...

Հայ ազգը որը ազգ է: Որը ու մենակ: Նա թվական աննշան ուժ է կազմում, իսկ դաժան պատմությունը միշտ պահում է նրա ստեղծագործող ոգին նկուն և երերուն վիճակի մեջ: Հողմահար ու հողմավար՝ նա ընթանում է իր պատմական ուղին, ճիգեր է թափում սեփական ոտքերի վրա կանգնել և իր ճակատագրի տնօրինողը լինել, սակայն արտաքին հանգամանքներն և ազդեցությունները ավելի զորավոր են հանդիսանում, քան նրա հավաքական ուժն ու կամեցողությունը ... Յո՞ երթաս, ո՛վ պատմության նահատակ ...

Դ. Անանուն

1915 թ. նոյեմբեր 23